

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԴԵՕ՞Ք ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ...

Ուաշինգտոնի մէջ մասնակցել է ետև «Հագարանակի Մարտահրաւրէրներ» ծրագրի շուրջ համաձայնագրի ստորագրութեան արարողութեան, ՀՀ Արտաքին Գործոց նախարար Վարդան Օսկանեան Մարտ 27-ին ելոյթ ունեցած է Հայկական Համագումարի, Հ.Բ.Մ.-ի եւ Հայաստանայց եկեղցոյ թեմերու կազմակերպած հայկական հարցերու համաժողովի ընթացքին:

Պր. Օսկանեանի ելոյթի գլխաւոր նպատակը եղած է՝ խրատել սփիւռքահայութեան, որ պէտք է ներդրումներ կատարեն Հայաստանի մէջ, նպաստելու համար հայրենիքին մերս աղատութեան կրճատման: Ան քաջ իմանալով, որ նման կոչերու հանդէպ իր ունկնդիրները արդէն իսկ կասկածամտութեամբ կը մօտենան, փորձած է ինքնաներազատելու ներդրումներու իրագործումը խանգարող ազդակներուն:

«Արդեօք ցանկանում եմք ունենալ մի երկիր ուր իւրաքանչիւրը՝ տղամարդ թէ կին, կը հաւատայ, որ կարող է ազատօրէն իր կարծիքներն արտայայտել, բուռն կերպով փոխել կեանքը, մեմ կարող եմք հաւատալ դատաւորների անաչառութեանը, ոստիկանների ազնուութեանը ու ուսուցիչների հոգատարութեանը, հարկեր են վճարում համակարգի՞ն, այլ ոչ թէ վճարում ենք անում պաշտօնեաների, հարուստի ու աղքատի միջեւ տարբերութիւնը միայն ժամանակի խնդիր է, այլ ոչ թէ՛ նակատագրի: Բնականաբար ցանկանում եմք», ըսած է Օսկանեան:

Ուրախալի է նախարարի քերական լսել Հայաստանի մէջ տիրող խոցելի կացութիւններու մասին նման անկեղծ մօտեցում, սակայն սփիւռքահայութեան մօտ քննում յառաջացնելու համար բաւարար չեն նման հարցականի ձեւով դրուած բարահիւսութիւնները: Կացութիւնը փոխելու նպատակով հիմնական քայլեր են անհրաժեշտ: Գլխաւորաբար պէտք է քաղաքական կամք: Այդ կամքի բացակայութեան մասին կը վկայեն վատթարացող ժողովրդավարութիւնը, մամուլի ու խօսքի ազատութեան նորանոր սահմանափակումները, դատական համակարգը իշխանութիւններու քաղաքականացումը իշխանափոխութեան:

Պահանջուածն ալ այդ է:

Ս.Դ.Է.Կ. Մամուլի Դիւան

ՓՐՈՓ. ՌԻԶԸՐՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ «ՍՓԻՒՔԸ ԲԱՒԱԿԱՆ ԼԱՒ ՏԵՍՆՈՒՄ ՈՒ ՇԱՍԿԱՆՈՒՄ Է, ԹԵ ԻՐԱԿԱՆՈՒՄ ԻՆՉ Է ԿԱՏԱՐՈՒՄ ՇԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

Հայաստանի մէջ սիրուած հարցազրոյցի մը ընթացքին, ամերիկահայ յայտնի պատմաբան, Լոս Անճելըսի Քալիֆորնիոյ Պետական Համալսարանի (ԵՈՒ.ՍԻ.Ա.Լ.ԷՅ.) արդի հայոց պատմութեան ամպիոնի վարիչ՝ փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեան «Ազատութիւն» ռատիոկայանի միջոցաւ ըսած է, - «Սփիւռքը բաւական լաւ տեսնում ու հասկանում է, թէ իրականում ինչ է կատարուում Հայաստանում, որ ամէն ինչ կեղծուած է, որ չկայ ազատ մամուլ, որ ամէն ինչի վրայ իշխանութիւնները խիստ վերահսկողութիւն են սահմանել ու ճնշումներ են գործադրում: Եթէ այսպէս շարունակուի, Հայաստանը կարող է ձախողուած պետութեան կարգավիճակ ունենալ»:



Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեան

այդ ժողովրդավարական համակարգը չէ: «Երբեմն մենք դատապարտում ենք Թուրքիային՝ ասելով, որ այնտեղ զինուորական բռնապետութիւն է եւ այլն, բայց փաստը այն է, որ այնտեղ թերթերը աւելի ազատ են», - ըսած է Ռիչըրտ Յովհաննէսեան:

Փրոֆ. Յովհաննէսեանի կարծիքով, այս բոլորի արդիւնքով ժողովուրդը լրիւ անտարբեր դարձած է քաղաքական գործընթացներու նկատմամբ եւ ոչ մէկուն չի հաւատար՝ ոչ իշխանութիւններ:

Շաբ.ը էջ 4

ԼԻԲԱՆԱՆ

Շ.Մ.Մ.-Ի ՍԿԱՌՏՆԵՐՈՒ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՄՈՒԽԹԱՐԱ



Ուալիտ ձեռնպուլաթ շրջապատուած Հ.Մ.Մ.-ի սկաւտներով՝ Մուխթարայի պալատէն ներս

Լիբանանեան մամուլը կը հարցրէ որ, Կիրակի Ապրիլ 2-ին Հայ Մարմնամարզական Միութեան՝ Հ.Մ.Մ.-ի սկաւտական պատուիրակութիւնը այցելած է Մուխթարա, ուր ծաղկեպսակ գետեղած է նահատակ Քամալ ձոնպուլաթի գերեզմանին: Սկաւտական փողերախումբը հնչեցուցած է Լիբանանի Քայլերգը եւ ապա շքերթով ուղղուած է Մուխթարայի պալատ, ուր

ընդունուած է լիբանանեան ընդդիմադրութեան ղեկավարներէն Ուալիտ ձոնպուլաթի կողմէ:

Հ.Մ.Մ.-ի պատուիրակութեան անունով ելոյթ ունենալով Սուլիմ Սուլեյմանեան ըսած է, - «Ինչպէս ամէն տարի, դարձեալ եկած ենք այցելելու մեծ նահատակ Քամալ ձոնպուլաթի գերեզմանին, վերանորոգելու է լիբանանեան ընդդիմադրութեան ղեկավարներէն Ուալիտ ձոնպուլաթի կողմէ:

Շաբ.ը էջ 4

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՄԱԿ-ԷՆ ՆԵՐՍ

Անցեալ շաբաթավերջին աւարտեցաւ Հայաստանի ու Ռուսաստանի դեսպաններու եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան ջանքերով կազմակերպուած գիտաժողովը՝ ՄԱԿ-էն ներս՝ «Ցեղասպանութիւն. երէկ եւ այսօր. ինչ դասերով կը մտնենք 21-րդ դար» խորագրի տակ:

«Առայժմ այս պէտք է գնահատել իբրեւ ՄԱԿ-ի մօտ կազմակերպուած հերթական քննարկում: Այն տեղի չէ ունեցած ՄԱԿ-ի հովանաւորութեան տակ: ՄԱԿ-ը միայն սրահը տրամադրած է, թէ եւ քննարկումներուն մասնակցած է նաեւ ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղար Քոֆի Անանի քաղաքական հարցերով օգնականը», - «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնած է քննարկումներուն հայկական տեսակետները ներկայացնող՝ Ջորջեան Հիմնարկի ցեղասպանութիւններու հետազոտութեան կենտրոնի տնօրէն, Փրոֆեսոր Վահագն Տատրեան:

Այն հարցին, թէ ի՞նչ նպատակ ունի ՄԱԿ-ը՝ նման քննարկումներուն տեղ յատկացնելով, Տատրեան ըսած է որ, ՄԱԿ-ը գիտական կենտրոն չէ, այլ քաղաքական մարմին, ուստի հիմնական նպատակը հետազոյց ցեղասպանութիւններու կանխումն է: «Նպատակը 20-րդ դարու առաջին ու վերջին ցեղասպանութիւնները ուսումնասիրելը, անոնցմէ դասեր քաղելն է՝ հետագայ ցեղասպանութիւնները կանխելու համար»:

ԵՐԹՈՂԱՆԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ՀԱՍԱԶԱՅՆ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՉ Կ'ԱՊՐԻՆ 50 ՀԱԶԱՐ ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐ

Ելոյթ ունենալով Նիւ Եորքի Արտաքին յարաբերութիւններու խորհուրդէն ներս, Թուրքիոյ վարչապետ Ռեջեփ Էրթողանի արտաքին քաղաքականութեան հարցերով խորհրդական, Թուրքիոյ խորհրդարանի անդամ Էգեմէն Պազիչ յայտարարած է թէ, միջազգային դիտողները կ'ակնկալեն, որ Թուրքիա բանալ իր սահմանը Հայաստանի հետ:

«Մենք կը ճանչնանք Հայաստանը իբրեւ ինքնիշխան պետութիւն: Մենք չունինք դիւանագիտական յարաբերութիւններ, բայց կը յարգենք անոնց (հայերու) ինքնիշխանութիւնը այնպէս, ինչպէս կը յարգենք նախկին Խորհրդային Միութեանը»:

Շաբ.ը էջ 4

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՂԱՐԱԲԱՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՄԱՑ

Այս տարուայ Յունուարի 13-ին խօսելով Ռուսաստանից Հայաստանին մատակարարող գազի գնի թանկացումը ինչ-որ ձևով կանխելու մասին՝ ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարեանը դեմ էր արտայայտել «Գոյք» գազի դիմաց» բանաձևին: Սա այն բանաձևն է, ըստ որի մենք ինչ-որ բան պետք է տայինք Ռուսաստանին, որի դիմաց ինքը համաձայն էր չթանկացնել մեզ մատակարարող գազը կամ էլ այդ թանկացածի արժեքը վերցնել գոյքով: «Ճիշդն ասած, աւելորդ ապրանք չունենք, որպեսզի ակտիվներով դա փոխհատուցենք: Եթե ակտիվներով էլ փոխհատուցենք, ընդամենը մէկ տարուայ եւ ոչ թէ արմատական խնդիր կը լուծուի», ասել էր Անդրանիկ Մարգարեանը: Այս յայտարարութիւնից մօտ երկու ամիս անց Հայաստանն ու Ռուսաստանը սկսել են ձեւակերպել իրան-Հայաստան գազամուղի Հայաստանով անցնող հատուածը եւ Հրազդանի Զէկ-ի հինգերորդ բլոկը Ռուսաստանին փոխանցելու համաձայնագիրը, ինչի դիմաց Ռուսաստանը վճարելու է բնամթերքով՝ տուեալ դէպքում գազով: Փաստորէն, տեղի է ունենում մի բան, ինչին հրապարակային դեմ էր արտայայտուել վարչապետը: Խնդիրը այստեղ իրադարձութիւնների զարգացման սկանդալային ընթացքը է, իբր վարչապետը չի տիրապետում իրավիճակին: Աւելի կարեւոր է հասկանալ, թէ ինչո՞ւ է նման վիճակ ստեղծուել: Երբ ՀՀ պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանը նախորդ շաբաթ ակնարկեց իրադարձութիւնների զարգացման նման հեռանկարի մասին, նոյն ժամին վարչապետը տեղեակ էր դրանից: Սա նշանակում է՝ «Գոյք» գազի դիմացը»

իրագործում է մի խօսակցութեան համատեքստում, ինչից տեղեակ է Սերժ Սարգսեանը, եւ տեղեակ է վարչապետ Մարգարեանը: Տուեալ դէպքում խօսքը ԼՂ հարցի կարգաւորման մասին է: ԼՂ հարցում Ռուսաստանի դիրքորոշումը, ըստ էութեան, այն կարեւոր կուռաններին մէկն է, որ Քոչարեանին օգնում է խուսանաւել հարցի կարգաւորման բանակցութիւններում: Ու հիմա Ամերիկան Քոչարեանին այդ կուռանից զրկելու խնդիր ունի: Դրա միակ եղանակը Ռուսաստանին համոզելն է, համոզելու ամենապարզ ձեւը՝ առեւտուրը: Ընդ որում՝ այդ առեւտրի արդիւնքում Ռուսաստանը պէտք է ստանայ այնպիսի մի բան, որ ինչ-որ կերպ համարժէք լինի ԼՂ հարցի չկարգաւորուածութիւնից իր ստացած օգուտներին, եւ ցանկալի է, որ այդ բանը լինի Հայաստանում: Իսկ այստեղ վաճառելու շատ բան չի մնացել, եւ ամերիկացիները ԼՂ հարցում կառուցողական դիրքորոշման դիմաց Ռուսաստանին առաջարկել են (կամ էլ ռուսներն իրենք են ուզել) Հրազդանի Զէկ-ի հինգերորդ բլոկը եւ իրան-Հայաստան գազամուղը, եւ գործարքը կայացել է: Ու հիմա Ղարաբաղի հարցում Ռուսաստանից աւելի կառուցողական դիրքորոշում պէտք է սպասել, եւ ԵԱՀԿ ՄԽ ռուսաստանցի համա-նախագահող Եուրի Մերզլեակովի փորձաքաղ թերեւս կ'անցնի: Ի դէպ, այս գործարքը ամերիկացիները կարող են դիտել նաեւ որպէս Հայաստանի վրայ անկառավարելի իրանի ազդեցութեան թուլացում կամ այդ ազդեցութեան փոխանցում աւելի կանխատեսելի Ռուսաստանին:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»
4-1-06

ՈՍԿԵ ՇԱՌԻՄԱ

Այսօր Ապրիլի Մէկն է, սիրելի ընթերցողներ: Իսկ Ապրիլի Մէկը, եթէ չէք մոռացել, կառավարութեան կողմից յայտարարուած է ծիծաղի օր: Յիշում էք նաեւ այս օրուայ աւանդական անուանումը՝ խաբելու օր: Այսպիսով, որոշակի իմաստով այս օրը մեր իշխանաւորների մասնագիտական տօնն է, ինչի կապակցութեամբ էլ շնորհաւորում ենք մեր բոլոր մեծ եւ մանր պաշտօնեաներին: Այս լուսաւոր տօնի կապակցութեամբ մենք էլ որոշեցինք այսօր մրցանակաբաշխութիւն չանցկացնել եւ բոլոր մասնակիցներին յանձնել մեր աւանդական ոսկէ շաուրման:

Եւ այսպէս, առաջին ոսկէ շաուրման յանձնում է ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանեանին: Այս քաջամուտ դիւանագէտն անցած շաբաթ հարցազրոյց էր տուել թուրքական թերթերից մէկին: Երկրադաբացիութեան մասին թուրք լրագրողի հարցին պատասխանելով, պարոն Օսկանեանը չզիտես թէ ինչու պատասխանեց, որ թուրքիայում սխալ պատկերացում ունեն Հայաստանի մասին, եւ եթէ թուրքերի պատկերացումները մեր երկրի մասին լինեն աւելի օբիեկտիւ եւ ամբողջական, կը փոխուի նաեւ հասարակութեան վերաբերմունքը մեր երկրի նկատմամբ: Թէ որքանով է հարցը համապատասխանում պատասխանին, թողնում ենք ընթերցողի դատին: Մեր կողմից կարող ենք միայն ասել այն, որ կամ թուրքիայի ողջ 70 միլիոնանոց բնակչութիւնը պերմանենտ դառնում է թարգմա-

նական սխալների գոհ, կամ էլ պարոն Օսկանեանը նախօրք որոշել է պատրաստուել Ապրիլի Մէկին՝ վերջիչելով այս սքանչելի տօնի ռուսական անուանումը՝ «Յիմարի օր»: Միայն յայտնի է, թէ մեր արտաքին գերատեսչութեան ղեկավարը ո՞ւմ է դրել յիմարի տեղ՝ թուրք լրագրողին, թէ՞ «Ինտերնետի» միջոցով հարցազրոյցին ծանօթացած հալ ընթերցողներին:

Այո, Ապրիլի Մէկը յիմարի մեծ տօն է եւ կրկնակի ուրախալի է, որ մեր արտասահմանեան բարեկամները նոյնպէս տուրք են տալիս մեր աւանդոյթներին: Դա այս շաբաթ ապացուցեց մեր երկրորդ ոսկէ շաուրմային արժանացած Հայաստանում Համաշխարհային Բանկի ներկայացուցիչ պարոն Ռոշեր Ռոբինսոնը, որը նշեց, որ թէպէտ գազի թանկացումը, անկասկած, կը վնասի որոշ անապահով ընտանիքների, սակայն կարող է եւ չունենալ այդպիսի վատ հետեւանքներ: Սոցնով պարոն Ռոբինսոնն անգնահատելի ներդրում կատարեց հոմորի, մանաւանդ՝ սեւ հոմորի բնագաւառում, ինչն անկասկած չի կարող չզնահատուել քաղաքակիրթ հայութեան կողմից:

Այսքանով աւարտում ենք մեր այս շաբաթուայ շաուրմայաբաշխութիւնը: Ինչպէս ընդունուած է այս դէպքերում ասել, պարտուողներ չեղան, յաղթեց, ինչպէս միշտ, բարեկամութիւնը:

Վ. ՂԱՍԱՐԵԱՆ
«ՁՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

«ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ»

«Անցկացուեց ծառայողական քննութիւն եւ պարգուեց, որ ձեր նշած փաստերը չեն համապատասխանում իրականութեանը»: Տարբեր կարգի չինովնիկների այսպիսի ստանդարտ պատասխան յաճախ է ստանում «Առաւօտի» խմբագրութիւնը: Նման պատասխանի «մեխանիկան» հետեւեալն է. տուեալ չինովնիկին կանչում է վերադասը եւ հանդիմանում. «Էս ի՞նչ են գրել թերթում: Հըլը մի հատ շուտ հերքի»: Յիշեալ չինովնիկը ձեւ է անում, իբր ստուգում է թերթում նշուած փաստերը, իրականում ինչ-ինչ փաստաթղթեր է «գոլում-փչում», կանչում է իր ստորադասներին եւ ասում՝ «դու այսպէս կ'ասես (կը գրես), դու՛ այնպէս»: Ահա եւ ողջ «ծառայողական քննութիւնը», որի արդիւնքում ծնւում է վերոյիշեալ ստանդարտ պատասխանը:

Օրինակներ՝ որքան ուզէք: Նոր Հաճընում «Առաւօտի» եւ «Չորրորդ իշխանութեան» թղթակիցներին ոստիկանները բռնի կերպով տանում են քաղմաս՝ պաշտօնեաների դղեակները նկարելու համար,

ԽՈՐՀՐԴԱԴՈՐ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Ինչպէս տեղեկացանք ՀՀ նախագահի մերձաւոր շրջապատին մօտ կանգնած աղբիւրից, Ուաշինգտոնում «Հազարամեակի մարտահրաւէրներ» ծրագրի շրջանակում Հայաստանին 236 մլն դոլար դրամաշնորհ յատկացնելու վերաբերեալ համաձայնագրի ստորագրմանը նախորդող գիշերը կառավարական ամուսնացում Ռոբերտ Քոչարեանի մօտ տեղի էր ունեցել խորհրդակցութիւն: Քննարկման առարկան էր, թէ արդեօք անհրաժեշտ է «դաբո» տալ այն նախապայմաններին, որոնց առկայութեան դէպքում ԱՄՆ-ի պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսը պատրաստ է «կանաչ լոյս» տալ դրամաշնորհի տրամադրման գործընթացին: Ինչ վերաբերում է նախապայմաններին, ապա դրանք քաղաքականութեանը տեղեակ ցանկացած մարդու համար գաղտնիք չեն՝ դարբանեան կարգաւորում ամերիկացիների առաջարկած սխեմայով, որի արդիւնքում այս տարուայ ամռանը արդէն պէտք է լուծուած լինի Արցախում եւ ազատագրուած տարածքներում խաղաղարար գորքի տեղակայումը, գումարած դրան ԱՄՆ-ին լայն հնարաւորութիւնների տրամադրումը՝ միջամտելու ինչպէս ընտրական գործընթացներին, այնպէս էլ ՀՀ ուժային կառույցների գործունէութեանը:

Ընդհանուր առմամբ, առաջադրուած նախապայմաններին հաւանութիւն է տրուել: Մեր աղբիւրը նաեւ շատ հաւանական է համարում, որ վերջին մէկ շաբաթուայ ընթացքում Երեւանում եւ Մոսկուայի հայ համայնքում լայն տարածում գտած խօսակցութիւնները Ռոբերտ Քոչարեանի իբր ունեցած լուրջ առողջական խնդիրների մասին կարող են առնչութիւն ունենալ «Հազարամեակի մարտահրաւէրներ» ծրագրի շրջանակում տրամադրուելիք 236 մլն դոլարի դրամաշնորհի հետ, որը, ի դէպ, բնոյթով չափազանց յարմար է չինովնիկութեան կողմից «ուտելու» համար:

«ԻՐԱՒՈՒՆՔ»
3-31-04

եւ պահանջում են յանձնել «ժապաւէնը»: Այսինքն՝ ակնյայտօրէն խոչընդոտում են լրագրողների աշխատանքը, ինչը յանցագործութիւն է: Դրա վերաբերեալ փոխոստիկանապետ Մաստեսեանը իբր ծառայողական քննութիւն է անցկացնում եւ իր կազմած փաստաթղթում գրում է, թէ ոստիկանները ոչ մի օրէնք չեն խախտել:

Օրերս Շահումեանի ոստիկանութեան հետաքննչական բաժնի աշխատակիցները օրը ցերեկով փողոցում մարդ էին ծեծում, եւ մեր հրապարակած լուրից յետոյ յայտնի դարձաւ, որ այդ կապակցութեամբ Երեւանի քաղաքային ոստիկանութիւնը «ծառայողական քննութիւն» է անցկացնում, բայց ոչ ոք չի կասկածում, որ այդ քննութեամբ կը պարզուի, որ նման բան տեղի չի ունեցել:

Այդ մեխանիզմն աշխատում է ոչ միայն ոստիկանութիւնում: Ամիսներ առաջ, օրինակ, մի սփիւռքահայ բողոքել էր, թէ որքան կոպիտ են իր հետ վարուել ավիաընկերութիւններից մէկի աշխատակիցները: Այդ մասին մեր հրապարակումից երկու շաբաթ յետոյ, երբ այդ սփիւռքահայն արդէն մեկնել էր Հայաստանից, ինձ գանգահարեց այդ ավիաընկերութեան չինովնիկներից մէկն ու տեղեկացրեց, որ իր անցկացրած «ծառայողական քննութեամբ» նման դէպք չի յայտնաբերուել:

Երբ համակարգը փտած է վերից-վար, եւ վերադասը բազմապիսի (առաջին հերթին՝ տնտեսական) թելերով կապուած է օրէնքը խախտող ստորադասի հետ, այդ վերադասի անցկացրած ծառայողական քննութիւնը մի կոպեկի գին չունի: Այնպէս որ, չարժէ այդ «քննութեան» համար թուղթ փչացնել:

ԱՐԱՄ ԱՐԲԱՀԱՄԵԱՆ
«ԱՌԱՒՕՏ»
4-4-06

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹ-ԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ՂԱՋԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ԳԱՐԻԷԼ ՄՈՒՆՅԵԱՆ
ՍԱՅԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ
Ֆեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party of
Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ԼՈՒԻՆԵՐ

«Ա1+»-Ի ԵԹԵՐԱԶՐԿՈՒԽԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ ԵՐ

ԵՐԵՎԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Ա1+»-ի եթերազրկումը քաղաքական որոշում է եղել ի օգուտ ազատ եւ անկախ իշխանիկներին»,- այսօր «Հայաստանում տեղեկատվական ճգնաժամի լաղթահարման ուղիները» թեմայով Քաղաքացիական ազգային նախաձեռնությունների կազմակերպած լրուժների ժամանակ ասաց «Ա1+» հ/ը նախագահ Մեսրոպ Մովսէսեանը:



«Ա1+» հ/ը նախագահ Մեսրոպ Մովսէսեանը Քաղաքացիական ազգային նախաձեռնությունների կազմակերպած լրուժների ժամանակ

Ըստ նրա, «Ա1+» եւ «Նոյեան Տապան» հեռուստաընկերությունները եթերազրկելով իշխանությունը վախեցրեց միւս հեռուստաընկերությունների աչքը: Եւ երբ 19 հեռուստաընկերություններ եւ թերթեր ստորագրեցին այն յայտարարություն տակ, որով փաստում էր, որ «Ա1+»-ը արդար մրցոյթում է պարտուել, իրենք ստորագրեցին իրենց դատավճիռը: «Դիտէք մեզ, ճանաչէք ձեզ», «Ա1+»-ի կարգախօսը մէջբերելով Մեսրոպ Մովսէսեանը նկատեց. «մեր իշխանիկները չուզեցին, որ հասարակությունն իրենց ճանաչի, ուզեցին անյայտ մնան ու անեն այն, ինչ ուզում են»:

նի, դա լաւագոյնս մատնանշում է, թէ ինչպէս պէտք է օրէնսդրօրէն սահմանափակել խօսքի ազատությունը:

«Ա1+»-ի պարտությունը մեր հասարակության պարտություն էր, սակայն հասարակությունը չկարողացաւ պայքարել իր իրաւունքների համար»,- արձանագրեց Հետաքննող լրագրողների ընկերակցութեան նախագահ Էդիկ Բաղդասարեանը: Դաւիթ Պետրոսեանը չի շեղեց, որ հասարակությունը դուրս եկաւ պայքարելու, սակայն շարժումը ղեկավարեցին ոչ թէ հասարակական կազմակերպություններն, այլ քաղաքական ուժերը, եւ դա արեցին ոչ այնքան լաւ: «Հանրապետություն» կուսակցութեան անդամ Արտակ Զէյնալեանն էլ նկատեց, որ իրենց սխալ այն էր, որ «Ա1+»-ի եւ ՆՏԻ խնդրեր կապուեց առաջիկայ ընտրութիւնների հետ. մտայնութիւն կար, որ խորհրդարանական եւ նախագահական ընտրութիւններում ընդդիմութիւնը կը յաղթի եւ բոլոր հարցերը կը լուծուեն համակարգային:

Հրաւիրուած էր նաեւ «Նոյեան Տապան» լրատուական գործակալութեան մեկնաբան, փորձագէտ Դաւիթ Պետրոսեանը, որը շփուելով նաեւ ընդդիմադիր քաղաքական գործիչների հետ հասկացել է, որ թէեւ ընդդիմութիւնը օգտագործում է խօսքի ազատութեան վերաբերեալ զեղեցիկ լուրջները, ինքն էլ չի հասկանում, թէ ինչպէս է նարաւոր երկրում հաստատել խօսքի ազատութիւնը, անել այնպէս, որ մամուլի ազատութիւնը կախուած չլինի վարչապետից կամ նախագահից: Ինչ վերաբերում է մամուլի մասին օրէնքին, ապա ըստ Դաւիթ Պետրոսեանի,

ՇԱԲԱՐՇ ՔՈՉԱՐԵԱՆ.- ԶԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆ ԶՈՒՆԻ ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՍԷ

ԵՐԵՎԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Հայաստանի իշխանութիւնն այսօրուայ դրութեամբ չունի արդար ընտրութիւն անցկացնելու քաղաքական կամք: Ապրիլի 3-ին, ինչպէս տեղեկացնում է ԱՌԿԱ գործակալութիւնը, այդպիսի կարծիք է արտայայտել Աժ պատգամաւոր Շաւարշ Քոչարեանը: Նրա գնահատմամբ, Ընտրական Օրէնսգրքի փոփոխութիւնների նախագծում հիմնական խնդիրները շրջանցուած են եւ կեղծիքների մեխանիզմները պահպանուած են: Շաւարշ Քոչարեանը համարում է, որ նախագծի տակ Աժ ընդդիմադիր խմբակցութիւնների ստորագրութիւնը վկայում է, որ խորհրդարանական ընդդիմութիւնը նոյնպէս չունի քաղաքական կամք: Այնուամենայնիւ պատգամաւորը կարծում է, որ դա երկար չի շարունակուի: Նա յայտարարել է, որ իր գլխաւորած Ազգային ժողովրդավարական կուսակցութիւնը մշակել է ԸՕ փոփոխութիւնների նոր նախագիծ: ԱժԿ ղեկավարի խօսքով, նախագիծն անգլերէն թարգմանելուց յետոյ իրենք դիմելու են Աժ նախագահին, իրենց նախագիծը վենետիկի յանձնաժողով փորձաքննութեան ուղարկելու համար: Շա-



ւարշ Քոչարեանը տեղեկացրել է, որ իրենց մշակած ԸՕ փոփոխութեան նախագիծը պարունակում է ընտրական յանձնաժողովների ղեկավար կազմերի նշանակման նոր մեխանիզմ: «Մենք առաջարկում ենք երկրում ընտրական տեղամասերը բաժանել երկու մասի՝ գոյզ եւ կենտ համարներով: Կենտ համարներով ընտրատեղամասերում յանձնաժողովի նախագահ կը նշանակի ընդդիմութիւնը, իսկ տեղակալ եւ քարտուղար՝ կառավարութիւնը: Զոյգ համարներով ընտրատարածքներում կը լինի հակառակը», ասում է Շաւարշ Քոչարեանը:

ԶԱՅԱՍՏԱՆԻ 235 ՄԻԼԻՈՆԱՆՈՑ «ԵՐԴՈՒՄԸ»

ԵՐԵՎԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Հազարամեակների մարտահրաւիրներ» համաձայնագրի ստորագրումը ԱՄՆ պետքարտուղարի օգնական Դենիէլ Ֆրիդը որակել է իբրեւ երդում, որը տուել է Հայաստանը՝ կառավարման ոլորտում աւելի մեծ զարգացումների, տնտեսական ազատութիւնների եւ սեփական ազգի համար ներդրումներ անելու ուղղութեամբ:

«Հազարամեակի մարտահրաւիրներ» ծրագրի շրջանակում տրուելիք դրամաշնորհի համաձայնագրի ստորագրումից յետոյ Ֆրիդը ակնարկել է, որ ԱՄՆ-ն Հայաստանից ակնկալում է միջազգային չափանիշներին համապատասխանող ազատ եւ արդար խորհրդարանական եւ նախագահական ընտրութիւններ, որոնք Հայաստանում անցկացուելու են 2007 եւ 2008 թուականներին: Ի դէպ, այդ ընտրութիւններն առանցքային են համարուում այն պարտաւորութիւնների շարքում, որոնք Հայաստանը ստանձնել է իրականացնել: «Հայաստանն ունի ներուժ տարածաշրջանում առաջնորդ դառնալու համար՝ ցուցադրելով առաջիկայում ժողովրդավարական բարեփոխումների ոլորտում, որոնք համահունչ կը լինեն նաեւ տնտեսական աճի հետ», - ասել է Դենիէլ Ֆրիդը: Անդրադառնալով Լեռնային

Ղարաբաղի խնդրին, պետքարտուղարի օգնականը նշել է. «Առաւելապէս հայերով բնակեցուած Ատրպէյճանի այդ տարածքում հակամարտութեան լուծման ուղիների որոնումը ԱՄՆ արտաքին քաղաքականութեան առանցքային կողմն է»: Պետքարտուղարութեան ներկայացուցիչը նաեւ փոխանցել է ԱՄՆ հիասթափութիւնն այն առնչութեամբ, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահների հանդիպումը Ռամբոյէտում անպտուղ էին: Սակայն իր վերջին հանդիպումներից յետոյ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահների հետ, Դենիէլ Ֆրիդը եզրակացրել է, որ «2006 թուականի ընթացքում առաջիկայացման հնարաւորութիւն կայ»:

Պետքարտուղարի օգնականը նաեւ տեղեկացրել է, որ ԱՄՆ-ն չի պատրաստուում ստիպել կողմերին լուծման որեւէ տարբերակ ընդունել. «Սակայն մենք պատրաստ ենք աջակցել կողմերին, եթէ նրանք գտնեն փոխադարձ համաձայնութեան»: Ի դէպ, պաշտօնեան այդպէս էլ չի մասնաւորեցրել, թէ հակամարտութեան կարգաւորման քննարկուող տարբերակից ոչ մի դրոյթ, նա միայն նշել է, որ պէտք է յարգել Լեռնային ժողովրդի կարծիքն ու միաժամանակ տարածքային ամբողջականութեան սկզբունքը:

ԱՐԱՄ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԸ «ԶԻՆԱՆՈՑԸ» ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է ՊԱՅՔԱՐԻ

ԵՐԵՎԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Ապրիլ 4-ին Մատենադարանի յարակից տարածքում հերթական բացօթեայ կոնֆերանս անցկացրեց հերթական ընդդիմադիր կուսակցութիւնը՝ «Նոր ժամանակները»:

Յիշեցնենք, որ առաջինն այդ մեթոդը կիրառել է «Հանրապետութիւն» կուսակցութիւնը: «Նոր ժամանակները» կուսակցութեան նախագահ Արամ Կարապետեանը կոնֆերանսի մասնակիցներին տեղեկացրեց, որ իրենք ստիպուած են բացօթեայ անցկացնել իրենց հանդիպումը, քանի որ իշխանութիւնները դահլիճ չեն յատկացրել, թէեւ կառավարութեան նիստերի դահլիճը, ըստ Կարապետեանի՝ այսօր ազատ է եղել:



Արամ Կարապետեանը ելոյթ կ'ունենայ Մատենադարանի առջեւ կայացած համաժողովում

Կարապետեանը չի շեղեց նախորդ տարի Ապրիլի 20-ի դէպքերը, երբ կրակել էին իրենց կուսակցութեան երիտթեւի ղեկավարի վրայ, երբ փորձել էին ձերբակալել իրեն կամ վախեցնել կուսակիցներին. «Ձեզ վաշտողուեց մեզ կոտորել, չի էլ յաջողուի», - ասաց Արամ Կարապետեանը: Նա տեղեկացրեց, որ կուսակցութիւնը բերում են մարտական վիճակի: «Կուսակցութիւնը պէտք է գործողութեան մէջ լինի, Մեղրիից մինչեւ Նոյեմբերեան 1 հրամանով աշխատում ենք, կուսակցութիւնը պատրաստում ենք որպէս զինանոց ու գորանոց. հիմնադրելու ենք եւս 12 տարածքային կազմակերպութիւններ, եւ 50 հազար հոգի ունենալու ենք, որ բերենք Երեւան», - յայտարարեց Արամ Կարապետեանն ու չի շեղեց, որ 3 տարի կոնստրուկտիւ առաջարկութիւններ են անում, բայց ոչինչ չի ստացուում. ելքը մէկն է. «Հայրենիքի փրկութիւնը հասարակութեան շատ խիստ ակտիւացումն է. մարդ ենք հաւաքում, բերում ենք Բաղրամեան ու հրաժարական»:

Ի դէպ, Արամ Կարապետեանը հրաժարուել է Փարաքարը փակելու մտքից, որովհետեւ ինչպէս ինքն է նկատում, այս իշխանութիւններին ոչ մի երկիր չի նստուել, հետեւաբար նրանք եթէ նստեն էլ ինքնաթիւ, կը մնան օդում: «Հիմա Փարաքարը պէտք չի փակել, պէտք է հաւաքել», - ասաց Արամ Կարապետեանը եւ խորհուրդ տուեց օդակայանի աշխատակիցներին իր ուղեբեռում չփնտուել Փարաքարի բանալին: Իսկ ոստիկանութեան աշխատակիցները աչալըջօրէն հետեւում էին բացօթեայ կոնֆերանսի ընթացքին:

Իսկ կոնֆերանսի ամենահետաքրքիր պահին պատուիրակների ուշադրութիւնը շեղեց մի բեռնատար աւտոմեքենայ, որի վրայ գրուած էր «ցեմենտ» եւ որը աղմուկով մխրճուեց կոնֆերանսի մասնակիցների շարքերն ու ճանապարհը շարունակեց դէպի յարակից տարածք: Կոնֆերանսը սկսուեց եւ աւարտուեց Հայաստանի Հանրապետութեան պետական օրհներգի հնչիւնների ներքոյ:

ԼՈՒՐԵՐ

ԱՏՐՊԵՅՃԱՆԸ ՎԱԿԱԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՅԼԵՐՈՎ ԻՐ ԴԻՐՔԵՐՆ Է ՈՒՋՈՒՄ ԱՍՐԱՊՆԴԵԼ

Վերջին ժամանակներս ատրպեյճանական կողմը իւրաքանչիւր օր տեղեկատուութիւն է հաղորդում շփման գծում տեղի ունեցած ընդհարումների մասին: Հայկական կողմը հերքում է նման հաղորդագրութիւնները կամ նշում, որ միջադէպեր միշտ էլ եղել են, պարզապէս, Ատրպեյճանը քաղաքականացնում է իրավիճակը: Ընդ որում, միջնորդները, նոյնիսկ դիտորդները ոչ մի քաղաքական գնահատական չեն տալիս իրադարձութիւններին: ԼՂՀ ԱԳՆ-ը նոյնիսկ ստիպուած է եղել հանդէս գալ յայտարարութեամբ, որտեղ նշուած է, որ դա կարող է հանգեցնել ստեղծուած հաւասարակշռութեան խախտմանը եւ Հարաւային Կովկասի ապակայունացմանը:

Մեր հարցազրոյցը այդ խնդիրների շուրջ քաղաքագէտ Դաւիդ ԲԱԲԱՆՆԻ հետ:

- Պարոն Բաբեան, ինչպէ՞ս կը գնահատուի միջնորդների կողմից ցուցաբերուող »պարիտետի« ազդեցութիւնը դարաբաղեան կարգաւորման վրայ:

- Միջնորդների դիրքորոշումը, սկսած 1988 թուականից, բաւականին հաւասարակշռուած էր: Հաւասարակշռուած՝ աշխարհաքաղաքական տեսակէտից: Այլ հարց է, թէ ինչպէս է նման «պարիտետը» ազդում տարածաշրջանում խաղաղութեան հաստատման գործընթացի վրայ: Բանն այն է, որ հակամարտութեան կողմերը միջնորդներից կոնկրետ քայլեր են ակնկալում: Իրօք, եթէ միջնորդներն առաւել կոնկրետ լինէին, կարգաւորումը կը հեշտանար: Սակայն կան մի շարք հակասութիւններ, առաջին հերթին միջազգային իրաւունքում, որը չի պարունակում կէտեր՝ պատասխանող չճանաչուած երկրներին հետ կապուած հարցերին: Բացի այդ, իրենք՝ միջնորդները տարբեր շահեր ունեն տարածաշրջանում: Օրինակ, եւրոպական կառույցները գերադասում են տարածքային ամբողջականութեան սկզբունքը: Դա հասկանալի է, քանի որ ինքը՝ Եւրոպան, գտնուում է ինտեգրման գործընթացի մէջ եւ ցաւալի է ընդունում ցանկացած սեփական: Ամերիկեան եւ ռուսաստանեան դիրքորոշումները տարբերում են եւրոպականից: Եթէ Ռուսաստանն ու ԱՄՆ տարածաշրջանում աշխարհաքաղաքական հարցեր են լուծում, ապա եւրոպայի կովկասեան քաղաքականութիւնը թելադրում է ներքին նկատառումներով եւ Եւրոպայում մասնագիտական մեծ համայնքի առկայութեամբ:

- Ինչո՞վ է պայմանաւորուած վերջին շրջանում տեղի ունեցող ակտիվութիւնը շփման գծում: Ո՞ւմ է այն ձեռն-

տում: - Առաջին հերթին՝ Ատրպեյճանին: Շատերն են արդէն խօսում այն մասին, որ 2006-ին համաձայնութեան գալու հնարաւորութիւն կը լինի: Եւ այդ համատեքստում Ատրպեյճանին շահաւէտ է ցուցադրել, որ հայերը մեղաւոր են գինադադարի խախտման մէջ: Դա եւ ներքաղաքական, եւ արտաքին քաղաքական նպատակներ է հետապնդում: Նախ՝ այդ երկրի ժողովուրդը միաւորում է ընդհանուր թշնամու գաղափարի շուրջ. չէ՞ որ Ատրպեյճանի համար հակամարտութիւնը դարաբաղատրպեյճանականից վաղուց վերածուել է հայ-ատրպեյճանականի: Բացի այդ, նման քաղաքականութեամբ Ատրպեյճանը փորձում է շեղել միջազգային հանրութեան ուշադրութիւնը կատարուող վանդալիզմի դէպքերից: Ասենք, Նոր Զուղայում կատարուածի հանդէպ առաջացած բացասական արձագանքը Ատրպեյճանը փորձում է կոմպենսացնել նման յայտարարութիւններով: Պետք է նաեւ նկատի առնել, որ Ատրպեյճանն ամէն կերպ փորձելու է օգտագործել իրանա-ամերիկեան յարաբերութիւնները սեփական հարցերը լուծելու համար:

-Ձեր կարծիքով, ինչպէ՞ս կ'անդրադառնայ Ատրպեյճանի՝ հակաիրանեան կողմից մասնակցելը դարաբաղեան կարգաւորման վրայ:

- Ատրպեյճանի կողմից իրանի դէմ ուղղուած քայլերի սատարումը կարող է չափազանց բացասական անդրադառնալ կարգաւորման վրայ: Ստեղծուած է բաւարարչային իրավիճակ. մի պետութիւն, որն ունի չլուծուած հակամարտութիւն, պատրաստակամութեամբ ներքաշում է մի այլ հակամարտութեան մէջ, որն ունի բազմաթիւ անյայտներ: Պարզ է, որ Ատրպեյճանն օգտագործելու է իրանական խաղաքարտ սեփական ազդեցութիւնը ընդլայնելու համար: Այսինքն, հակաիրանեան քայլերի աջակցութիւնը Ատրպեյճանի կողմից էքսպանսիոնիստական մոտիվներ ունի: Եթէ Ատրպեյճանը շահագրգռուած է հակամարտութիւնների խաղաղ կարգաւորմամբ, նա պէտք է յայտարարի դրա մասին, այդ թւում՝ իրանեան հակամարտութեան վերաբերելով: Այնինչ այդ երկրում աւելանում է ուժային ճանապարհի ջատագովների թիւը: Եւ դրա հիմնական պատճառը իրանի Հարաւային եւ Հիւսիսային Ատրպեյճանների հաշուին սեփական ազդեցութեան գոտու ընդլայնման ակնկալիքներն են: Ատրպեյճանի նման էքսպանսիոնիստական նկրտումները ոչ մի լաւ բան Ղարաբաղի համար չեն կարող նշանակել:

«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՄՍՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԽՆԴՐՈՒՄ ԱՌԱՋԽԱՂԱՅՈՒՄ ԶԿԱՅ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Վիեննայում տեղակայուած Մամուլի Միջազգային Ինստիտուտը այսօր հրատարակելու է 2005 թուականի գեկոյցը: «Հայաստանում իրավիճակը նախորդ տարիների համեմատութեամբ առանձնապէս չի փոխուել, էական բարելաւում չկայ, կան մամուլի ազատութիւնը խախտելու բազում դէպքեր, մասնաւորապէս, առ այսօր խնդիրներ ունի «Ա1+» հեռուստաընկերութիւնը», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց Մամուլի միջազգային Ինստիտուտի խորհրդական Դիանա Օրլովան, ով հետեւում է ԱՊՀ-ի տարածաշրջանի զարգացումներին:
Նրա խօսքերով, նախկին խորհրդային այլ երկրների համեմատութեամբ Հայաստանը չի դիտուում մամուլի ազատութեան գաղափարի ջատագով, այդ առումով, շատ աւելի նախանձեղի դիրքերում են բալթեան հանրապետութիւնները:
Հարաւային Կովկասի երեք

երկրներում գրեթէ նոյն կացութիւնն է: «Իհարկէ, վերջին երկու տարում վրաստանում շատ բան է փոխուել, իշխանափոխութիւն է տեղի ունեցել: Իսկ Ատրպեյճանում իրավիճակը, թերեւս, ամենաձանրն է, չմոռանանք, որ այնտեղ անցեալ տարի լրագրող է սպանուել», - նշեց Օրլովան՝ յաւելելով, որ ԱՊՀ-ի տարածքում ամենաբարդ կացութիւնն այժմ Բելառուսում է:

Ըստ Մամուլի միջազգային Ինստիտուտի գեկոյցի, ընդհանուր հաշուով ամբողջ աշխարհում անցեալ տարի սպանուել է 65 լրագրող, մամուլի համար ամենավտանգաւոր երկիրն այսօրուայ դրութեամբ Իրաքն է: Լրագրողներ են սպանուել 21 երկրներում եւս, 4-ը՝ Արեւելեան Եւրոպայում, 26-ը՝ Մերձաւոր Արեւելքում եւ Հիւսիսային Աֆրիկայում՝ վերջին երկուսը համարում են աշխարհում մամուլի համար ամենաանբարենպաստ տարածաշրջանները:

ՓՐՈՖ. ՌԻՉԸՐՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

Շարունակուած էջ 1-էն

րուն, եւ ոչ ալ անոնց հակառակորդներուն:

«Սփիւռքը եւս այս ամէնը տեսնելով, կամաց-կամաց հաւատը կորցնում է Հայաստանի նկատմամբ, եւ անձամբ գիտեմ տանեակ մարդկանց, ովքեր որոշել են այլեւս փող չտալ Հայաստանին: Հաւատը կորցրել են, թէեւ հրապարակաւ խուսափում են քննադատելուց, իսկ դա գուցէեւ ցեղապանութեան հետեւանքն է. այնքան վնասներ ենք կրել, ու չենք ուզում վտանգել այդ փողը տարածքը, որը մնացել է եւ կրում է Հայաստան անունը, - ըսած է Յովհաննէսեան ու աւելցուցած, «Միւս կողմից, որպէս պատմաբան տեսնում եմ, որ այս արդէն հիւսնդագին վիճակ է, եւ պէտք է լուծուի, այլապէս կը կորցնենք ժողովրդի հաւատը պետութեան նկատմամբ եւ կը կոչուենք ձախողուած պետութիւն: Մենք չենք ուզում լինել ձախողուած պետութիւն, եթէ այս պետութիւնն էլ ձախողուի՝ մենք չունենք ապագայ»:

Փրոֆեսորը համոզուած է որ, Հայաստանի իշխանութիւնները վերջապէս պէտք է հակնան, որ առաջնայինը պետութեան եւ ժողովուրդի շահերն են, այլ ոչ թէ անձնական շահն ու փառքը:

Առաջին հանրապետութեան որպէս մասնագէտ պատմաբանը համեմատութիւնը կատարելով ըսած է,-

Յ.Մ.Մ.-Ի ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՄՈՒՆԹԱՐԱ

Շարունակուած էջ 1-էն

րոգուելու անոր մտքերով եւ պահանջները պայքարի այն ժառանգութիւնը, որ գոյութիւն ունեցած է Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան եւ Ընկերվար Յառաջդիմական Կուսակցութեան միջեւ:

«Մեր երկու կուսակցութիւններում միջեւ գոյութիւն ունի մէկէ աւելի նմանութիւն: Կայ գաղափարի կապը եւ կայ՝ կողք-կողքի պայքարի կապը, նախորդ դարու յիսունական թուականներէն ասդին, երբ մուխթարան բոլոր ազատամարտիկներու խնամախոսն էր՝ յանուն դեմոկրատական ազատութիւններու եւ ճշունած դասակարգերու պաշտպանութեան,- ըսած է ընկերուհի Սուլթանեան:

Նախկին նախարար եւ այժմու խորհրդարանի անդամ Ուալիտ ձոն-

պուլաթ ողջունելով պատուիրակութիւնը ըսած է,-«Հայ ժողովուրդը եւ դուք մեծ գոհողութիւններ ստանձնեցիք: Ահռելի ջարդերու ենթարկուեցաք թուրքիոյ մէջ: Վերջապէս պատմութիւնը սկսաւ ձեզի տալ ձեր իրաւունքը եւ ունեցաք ձեր անկախ պետութիւնը»:

«Դուք որպէս Հայ ժողովուրդ եւ որպէս Հնչակեան Կուսակցութիւն եւ բոլոր կուսակցութիւնները կը մնաք հաւատարիմ Լիբանանին եւ աստծոյ կամքով, միասնաբար պիտի իրագործենք Լիբանանի անկախութիւնը, ազատութիւնը եւ գերիշխանութիւնը», շեշտած է Ընկերվարական Կուսակցութեան ղեկավարը, որու հետ Հնչակեան կուսակցութիւնը նոյն իրամասններու մէջ գտնուած է 1958-ի Լիբանանի յեղափոխութեան ընթացքին:

50 ՀԱՋԱՐ ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐ

Շարունակուած էջ 1-էն

դային Միութեան միւս հանրապետութիւններու ինքնիշխանութիւնը»:

Թուրքիոյ վարչապետի խորհրդականը ըսած է, թէ Թուրքիա չի բանար իր սահմանները Հայաստանի հետ եւ չի հաստատեր դիւանագիտական յարաբերութիւններ, քանի որ Հայաստան չի ճանչնար այդ սահմանները:

«Հայաստանի Սահմանադրութիւնը կոչ կ'ընէ չճանչնալ սահմանները Թուրքիայի հետ», ըսած է էգեմէն Պափը Նիւ Եորքի Արտաքին յարաբերութիւններու խորհուրդէն ներս իր տուած դասախօսութեան ժամանակ:

Հեղինակաւոր հետազոտական

կենտրոնէն ներս հաւաքուած մասնագէտներուն եւ լրագրողներուն թուրք բարձրաստիճան պաշտօնեան յայտնած է, թէ ներկայիս Թուրքիոյ մէջ կը բնակին աւելի քան 50 հազար հայաստանցիներ, որոնց մեծ մասը ապօրինի ներգաղթողներ են: Ան ըսած է, թէ հայաստանցիները Թուրքիոյ մէջ գլխաւորաբար կ'աշխատին իբրեւ դայեակներ՝ թուրք ընտանիքներու մօտ:

«Թուրքերը իրենց ամենաթանկ բանը՝ երեխաները կը վստահին հայաստանցիներուն: Այս կը նշանակէ, որ մարդոց մօտ ատելութիւն չկայ եւ կ'ապացուցէ, որ մեզ շատ բան կը միացնէ, որ մեր մշակոյթներուն մէջ շատ ընդհանրութիւններ կան», շեշտած է թուրք դիւանագէտը:

ԲԱՂԱԲԱԿԱՆ

ՊՈՒՇԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԵԱՑՔԸ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՂՐԵԱՆ

Քաղաքական միամտութեան եւ երազատեսութեան գեղեցիկ մէկ նմոյշ մըն է նախագահ Պուշի իշխանութեան աշխարհայեացքը: Ահաւասիկ իրաքեան պատերազմի 3րդ տարեդարձին եւ Պուշի յայտարարած «Չարի առանցքին» նմոյշ հաղիսացող նոր բարդութիւն մը կ'ուրուագծուի քաղաքական հորիզոնին վրայ: Նախագահ Պուշ եւ իր իշխանութեան գլխաւոր պատասխանատուները չեն անդրադառնար որ իրենց իրաքեան արկածախնդրութեամբ շատ աւելի կը զօրացնեն դիրքերը Իրանի արմատական եւ ծայրահեղ կառավարութեան: Այս մէկ դրսեւորումն է ոչ թէ քաղաքական մարտավարութեան մը, այլ դժբախտ ողբերգութեան մը, որ խորքին մէջ, կը հանդիսանայ Պուշի իշխանութեան համաշխարհային հարցերու նկատմամբ ունեցած մտեցման խեղճութիւնը: Աշխարհի միակ գերզօր պետութիւնը ներկայիս աշխարհին կը մօտենայ «բարիի եւ չարի» միամիտ համեմատութիւններով, կարծես թէ այս սկզբունքները կրնան հիմք կազմել շատ աւելի բարդ եւ շատ աւելի հիմնական հարցերու:

Տարիներով, Պուշ եւ իր կողմնակիցները նոյն վերաբերմունքը ցոյց տուին Ուսամա Պըն Լատտընի «Ալ Քալիտայ»-ի, Սատամ Հիւսէյնի եւ Իրանի մոլլանրուն նկատմամբ, կարծես թէ անոնք նոյն հարցի տարբեր արտայայտութիւնները ըլլային: 1980-ական թուականներուն, Իրաք եւ Իրան բիրտ պատերազմ մղեցին իրարու դէմ, մարդկային տարրերը գործածելով իբրեւ պատերազմական զէնք: 1990-ական թուականներուն, «Ալ Քալիտայ»-ի կողմնակիցները սպաննեցին խումբ մը իրանցի դիւանագէտներ: Տարիներով Ուսամա Պըն Լատըն ծաղրանքի կ'արժանացնէր Սատամ Հիւսէյնը, որ միեւնոյն ատեն հալածանքի կ'ենթարկէր Սիւնի եւ Շիի կրօնական առաջնորդները: Աւելին, երբ «Ալ Քալիտայ»-ն 9/11-ի ահաբեկչութիւնը կազմակերպեց, Իրան դատապարտեց այս արարքը, եւ ապա, գործօն մասնակցութիւն բերաւ Աֆղանիստանի վերաշինութեան խօսակցութեանց: Նոր Իրաքի գլխաւոր դեկավարները Իրանի բարեկամներ են: Այս պայմաններու տակ, երբ Պուշ Իրաքի վրայ կը չարձակէր «բարիի եւ չարի» միջեւ «բարիի» մտահոգութեամբ, իր այսինքն Պուշի արձակած ոյժերը շատ աւելի բարդ հանգամանք ունէին, եւ կը շարունակեն ունենալ:

ԻՆՉ Է ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՆԵՐԿԱՅԻՍ

Ամերիկեան իշխանութիւնը ներկայիս բաժնուած է երկու մասերու - անոնք որոնք կը հասկնան կացութեան բարդ հանգամանքը, եւ անոնք որոնք չեն հասկնար: Մէկ կողմէ, կան անոնք, որոնք փոխնախագահ Տիք Չէյնի կողմնակիցները, ըստ երեւոյթին կը խորհին թէ նոյնը կրնան ընել Իրանին, ինչ որ եղաւ Իրաքին: Մինչ այդ սակայն, նոր Իրաքի դեկավար մարդիկ անկարող են կեդրոնական գործող եւ զօրակոր կառավարութիւն մը կազմել առանց Իրանի օրհնութեան: Եթէ առաջարկուող, Իրանի կողմէ, ԱՄՆ-Իրան երկուս-

տեք խօսակցութիւնները տեղի ունենան ինչ որ կասկածելի է, որոշ հարցերու պարագային, կրնան յառաջդիմութիւններ ըլլալ:

Քանի մը հիմնական հարցեր կ'արժէ Պուշի ուշադրութեան յանձնել եւ որոշնք են այդ հարցերը:

Ա. Պուշ եւ իր իշխանութեան գլխուի կանգնած մարդիկ պէտք է հասկնան որ «աշխարհի վրայէն բռնատիրութիւնը ջնջելու» փափաքը անիրագործելի «ֆանթեզի» - երազատեսութիւն մըն է, եթէ անոր չեն ընկերակցիր հիմնական կրթեւոր հարցերու լուծումները: Իրաքի պարագային, տեղի ունեցող կուրի երթումով «gang»-երու պատերազմի ձեւ կ'առնէ որ երկու ձեւով կրնայ լուծուիլ - կամ մէկ կողմը իր լման կամքը կը պարտադրէ միւսին վրայ, ինչ որ անկարելի կը թուի ներկայիս, եւ կամ ալ, շահախնդրուած կողմերը հաւասարապէս կը մասնակցին իշխանութեան: Ներկայիս Ամերիկեան անկարող է դէպքերու վրայ իր հակակշիռը բանեցնել եւ սակայն կրնայ օգտակար ըլլալ իբրեւ իրաւարար:

Բ. Պուշի իշխանութիւնը պէտք է հրաժարի Իրանի մէջ իշխանութիւն փոխելու իր ծրագրերէն: Ոչ թէ անոր համար որ պէտք է փոխուի այդ իշխանութիւնը, որուն գլուխը ներկայիս կը գտնուի ծայրահեղ մտածող մը, այլ քանի որ այդ փոփոխութիւնը անկարելի կը դառնայ պարզապէս քանի որ Ամերիկեան է գայն ուզողը: Այսօրուայ քաղաքական շփոթ միջավայրին մէջ, Ամերիկայի հետապնդած որեւէ ծրագիր աւելի նպաստաւոր կը հանդիսանայ ծայրահեղ կողմերուն: Ծիծաղելի կը թուի այն ենթադրութիւնը որ Իրան աւելի պատրաստ պիտի ըլլայ Իրաքի մէջ գործակցելու եւ կամ իր հիւլէական աշխատանքները դադարեցնելու, եթէ ինքզինք սպառնալիքի տակ զգայ Ամերիկայի կողմէ: Իրանի ներկայ դեկավարը աւելի հեշտ պիտի ըլլայ ներքնապէս չէզոքացնել, եթէ արտաքին աշխարհի ոյժեր չսպառնան իրեն:

Գ. Մերձաւոր Արեւելքի պարագային, Պուշի իշխանութիւնը կը հետապնդէ «ազատութեան եւ տեմոքրատի» քաղաքականութիւն մը, որ հաճելի լոգունգ մը չէ իսլամական աշխարհէն ներս: Շիիներու պարագային, շուրջ 1000 տարի է ի վեր, առաջին առիթը կը ներկայանայ իրենց իշխանութեան հասնելու: Այդ լոգունգը հաճելի չէ Լիբանանի մէջ, ուր Իրանը գրաւած է Սուրիոյ պարագայ ձգած տեղը: Այդ լոգունգը նոյնպէս հաճելի չէ պաղեստինցիներուն, որոնք, ազատ ընտրութիւններով, իշխանութեան բերին «Համաս» ահաբեկչական կազմակերպութիւնը: Նոյնիսկ Իրաքի պարագային, իշխանութեան եկած կողմերը յաջողութիւն գտան ծայրահեղ «միլիտար»ներու նեցուկով: Այս պայմաններու տակ, Պուշի իշխանութեան հետապնդած աշխարհայեացքը աւելի երազատե-

սութեան կը նմանի քան թէ գործնական մարտավարութեան մը: Յատկապէս աշխարհի տագնապալի այդ շրջանէն ներս, հաւանական տիրապետող երեւոյթը պիտի ըլլայ ոչ թէ «բարիի եւ չարի» միջեւ կռիւը, այլ այն խոր տարակարծութիւնները որոնք գոյութիւն ունին Սիւնիի եւ Շիիի, արաբի եւ պարսիկի, արաբի եւ քիւրտի, քիւրտի եւ թուրքի, հաշիմականի եւ սէուտականի, արաբի եւ հրէայի միջեւ: Այս է այսօրուայ իրականութիւնը որուն կամ կ'անդիտանայ Պուշ եւ իր իշխանութիւնը, ինչ որ գարմանալի պիտի ըլլար, եւ կամ ալ չուզեր նկատի առնել: Եթէ Ամերիկեան պիտի չարունակէ «դեկավարել աշխարհը», պէտք է լուրջ վերանայման ենթարկէ իր ցարդ հետեւած քաղաքականութիւնը, որ երազատեսութեան եւ խաբկանքի կը նմանի:

ՄԱՇՏՈՑ ԳՈՒԷՃԸ ԵՐԵՔ ՆՈՐ ԴԱՍԸՆԹԱՅՔՆԵՐ Կ'ԱԻԵԼՅՆԷ ԻՐ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ ԿՐԱՅ

Մաշտոց Գոլէճը մեծ թափով կը շարունակէ իր ազգակրթական ծառայութիւնը օգտակար հանդիսանալով Լոս Անճելըսահայ համայնքի մասնագիտական կարիքներուն: Հայագիտութեան, Մանկավարժութեան, Համակարգիչներու Գիտութեան, Հոգեբանութեան, Բժշկական Հաշուեզրութեան, Անգլերէն եւ Օտար Լեզուներու դասընթացքները կը կազմեն կորիզը Մաշտոց Գոլէճի ակադեմիական ծրագրին:

Ընդառաջելով մեծ թիւով հայրենակիցներու խնդրանքին, Մաշտոց Գոլէճը հետեւեալ երեք դասընթացքները աւելցուցած է իր կրթական ծրագրին վրայ եւ որոնք գործադրութեան պիտի դրուին Մարտ-Ապրիլ ամիսներէն սկսեալ:

Ա. Հայկական ճարտարապետութեան Պատմութեան Դասընթացք, երկու մակարդակով՝

1. Համառօտ դասընթացք եւ 2. Լրիւ դասընթացք: Դասախօսն է հանրածանօթ ճարտարապետ՝ Վարուժան Աբշէհրլեան: Դասընթացքը կը բովանդակէ հետեւեալ նիւթերը.- Հնագոյն կառուցուածքները հայկական բարձրաւանդակներուն, Հայաստանի հնադարեան քաղաքաշինութիւնը եւ ճարտարապետութիւնը, Հայկական ճարտարապետութիւնը աւատապետական (ֆեոդալիզմ) դարաշրջանին, Հայկական միջնադարեան ճարտարապետութիւնը, Հայկական ուշ միջնադարեան ճարտարապետութիւնը, Եկեղեցական ճարտարապետութիւնը, կարեւորագոյն վանքային համալիրներ եւ եկեղեցիներ, Քաղաքաշինութիւնը հայկական մի քանի գաղթավայրերու մէջ, Նոր ժամանակաշրջանի քաղաքաշինութիւնն ու ճարտարապետութիւնը:

Բ. Մարդկային եւ Ընտանեկան Փոխ-Յարաբերութիւններ - Ինչպէս բերել փոխ-ըմբռնումներ խաղաղ ճանապարհով: Դասախօսն է Դոկտ. Գաղիկ Մելքոնեան: Սոյն դասընթացքները անախընթաց խանդավառութիւն

Շաբ.ը էջ 19

Easter Eggstravaganza
 Hosted by: Homenmen-Glendale
 Easter Sunday, April 16, 2006
 Starting at 2PM
 Homenmen Agoump
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104

Adults: \$25 Donation
 Children: \$15 Donation
 (818)384-2987

Food & Music, Egg Fight, and special surprises



ՄՁԱԿՈՅԹ

ԳԻՒՄՐԻԻ ՈՍԿԵԱՅ ՏԱՂԱՆԴՆԵՐԸ
ՇԼԱՑՈՒՑԻՆ ՄԵՉ

»Թօթուած, ինչպէս, ցուրտն ու ձմեռն այսօրուան,
ես կը խորհիմ առաւօտուն այն գարնան՝
Ուր հին կոճղէն նոր բողբոջներ պայթեցան«:

ՎԱՀԱՆ ԹԷՔԵԱՆ

ԱՆԳԻՆԷՆ ԲԷՇԻՇԵԱՆ-ՄՈՒՐԱՏԵԱՆ

... Եւ այդպէս էր մեր երաժշտական կեանքը գարնանամուտին: Հոգեկան հրճուանք էր տեսնել մեր կոկոն աստղերը լեցուն սրահներուն մէջ: Վարդան եւ Սիրանոյշ Գէորգեաններու 500ի մօտ նոր սերունդ պարախումբի գերգնահատելի ելուցիւթը, քանի մը օր ետք, Պելճիքայի էլիզապէթ Թագուհիի ջութակի մրցումի առաջին մրցանակակիր «Ֆենոմենալ» ջութակահար Սերկէյ Խաչատրեանի եւ քրոջ՝ Լուսինէի աննախընթաց համերգը, եւ ահա շաբաթավերջին Գիւմրիի փայլուն աստղերը գարնամացումին մեզ: Պարոյր Սեւակ պիտի ըսէր. Դէ՛, ե՛կ, վարդապետ եւ մի ժպտար բարի: Երբեմն



Քրիստինէ Սիմոնեան

չներու որոնք հայ մշակութի գանձերը հարստացուցած են:

Ահա 6 պատանի, առողջ, խանդավառ եւ հանճարային արուեստագետ որ պատիւ կը բերէ ոչ միայն իր ընտանիքին, ազգին, ժողովուրդին այլ մարդկութեան, այնքան որ կատարելագործուած է իրենց արուեստը, այնքան որ բիւրեղ եւ վճիռ է իրենց կատարումը, այնքան որ խանդավառող եւ առինքնող է իրենց վարպետութիւնը: Աչքերս չի դադրեցան տամկանալէ, կը մտածէի, թէ որքան պարարտ եւ հարուստ ըլլալու է հայրենի հողը, արմատները ու ժող պահպանած դիմադրելով բոլոր հողմերուն, մրրիկներուն եւ



Մանէ Գալոյեան

անակնկալ հաճոյքները կրնան աւելի գոհացում տալ, քան թէ բուռն անձկութեամբ ակնկալուած հաճոյք մը:

Մարտ 19..., խճողուած օր...:

Այդ օրը Լոս Անճելոս բեռնաւորուած էր բազմաթիւ ձեռնարկներով: Շատերս ստիպուած եղանք ամբողջ օրը տունէն դուրս ըլլալու: Քիչ մը յոգնած, սրտատրոփ, ոչ մեծ ակնկալութեամբ փութացի Ալէքս համերգասրահ, Գիւմրիի նորատի տաղանդները վայելելու: Ժամը 6էն առաջ ակնատես եղայ ազնիւ ժողովուրդին շարան-շարան կարգապահ մուտքը եւ աթոռ գրաւելը: Կարծես բոլորս եկած էինք քաջալերանքի պարտականութեան ոգիով, քան թէ մեծ ակնկալութեամբ: Եւ իրաւ ալ հպարտութեան զգացումով, ուրախութեան արցունքով, շնորհ բաժնուեցանք սրահէն:

Միթէ վերածնունդ չէ՞, մոխիրներէն ելած այս սերունդը, կու գային բորբոքած, աւերուած տանջուած Գիւմրիի բարեբեր հողէն, հազիւ աղէտէն 3-4 տարի վերջ ծնած: Ինչպէ՞ս չհիանալ, չլուզուիլ այս փոքրերու ցուցաբերած տոկունութեան, կենցաղային, ապրուստի անձուկ ծանր պայմաններու տակ, յամառ յարատեւելու կամքին, հաւատք ներշնչելով մեր անկայուն հայրենիքի հանդէպ: Եկան հաստատելու թէ գիւմրեցիին չի վախնար ցուրտէն, մութէն, այլ դժուարութիւններէն եւ որոշած է իր պայտերուն ձգած աւանդը, համբաւը վերականգնել: Այս 6 ընտանի տաղանդները շառաւիղներն են այն հոյ՛ մը արուեստագետներուն՝ Գուսան Շերամի, Ա. Տիգրանեանի, Շարա Տալեանի, Խաչատուր Աւետիսեանի, Զարա Տուրուխանեանի, Վարդուհի Խաչատրեանի եւ ուրի-



Սաշա Աթանեան

գարնան ցորենի հասկերու նման նոր տաղանդներ կը ծլարձակեն:

Յիշեցի «Գոհար» համոյթի գեղարուեստական դեկավար եւ երաժշտանոցի տնօրէն Սեպուհ Աբգարեանի խանդավառ նոյն ատեն ցաւով խօսքը, թէ Գիւմրիին անտեսուած է, ոչ ոք կը հետաքրքրուի բացառիկ տաղանդներով եւ երաժիշտներով: Յիշած էր թէ երաժշտանոցը ունի 300է աւելի անձնակազմ, ուսուցիչ եւ եզակի տաղանդներ: Ուրախացայ տեսնելով անոնցմէ երկուքը քանոնահար՝ Քրիստինէ Սիմոնեանը եւ ջութակահար սՍաշա Աթանեանը այս խումբին մէջ:

Գեղադէմ ընտրանի պատանիները իրար ետեւէ ժպտուն բեմ եկան, հանգիստ, համարձակ մեկնաբանեցին իրենց կտորները, յղուած վարպետութեամբ եւ զգացողութեամբ:

Հռիփսիմէ Աղաքարեան (14 տարեկան), նրբակազմ, սիրալիր, ամօթիսած ժպտով բեմ ելաւ, դաշնակին առջեւ այլափոխուեցաւ, կարծես նոյն անձը չէր, բացառիկ սահունութեամբ, ինքնավստահու-



Արսէն Գեղարեան

թեամբ նուագեց թէքնիք պահանջող կտորներ Խաչատուրեանէն, Պապանեանէն եւ Լիստէն: Առաջին վարկեանէն խանդավառելով եւ ջերմացնելով սրահի ունկնդիրները:

Հապա ինչպէ՞ս չգովեմ անուշիկ փոքրիկ ապագայի երգարուեստի աստղերը՝ Աննա Ավդալեան (11 տարեկան) եւ Մանէ Գալոյեան (13 տարեկան), անմիջական հաղորդական երգչուհիներ, իսկապէս հրաշք աղջնակներ: Զարմացումն բոլորին իրենց ձկուն, յստակ ձայնային ելեւէջներով, յստակ առողանութեամբ: Անտարակոյս մեծ բեմերու կ'արժանանան եթէ ճիշդ ուղղութեամբ աշխատին եւ յարատեւեն:

Նաեւ ապագայ Ռուբէն Մաթէոսեան - Արսէն Գէորգեանը (13 տարեկան) ախորժալուր ձայնով կ'երգէ համարձակ եւ ջերմ: Մարգարտանման յստակ էին ձայնելեւէջները, հաճելի բեմականութիւն եւ անհատականութիւն ունի:

Միակ 15 տարեկան քանոնահարուհի Քրիստինէ Սիմոնեան եւ ջութակահար Սաշա Աթանեան «Գոհար» երաժշտանոցի շնորհալի աշակերտներէն, բացառիկ թէքնիկ, զգայնութիւն ցուցաբերեցին: Քրիստինէի մասնակցութեամբ ձկուն եւ սահուն կը հպչին լարերուն, նուագը անմահացնելով: Փայլուն ջութակահար է Սաշան, գործիքին կատարեալ տիրապետած, հնչիւնները ջերմ, հիւթեղ եւ յստակ: Խնամքով եւ զգացումով նուագեց Խաչատուրեանի ջութակի Քօնչէրթոյի 2րդ բարդ մասը, ցուցաբերեց երաժշտականութիւն: Գոհարի



Աննա Ավդալեան

տեսաներիցի մէջ տեսած էին Սաշան՝ փոքր ջութակահարը, յիշեցի Սեպուհին գովասանքը, նոյնիսկ համերգային ուղեւորութեան տարած էին գիրքը քաջալերանքի եւ ցոյց տալու փոքրիկ աստղը: Լուրջ ինքնամփոփ եւ զգոյշ է նուագը, մաղթեմ որ կը յաջողի:

Տիգրան Յովհաննէսեանի



Հռիփսիմէ Աղաքարեան

նուագակցութիւնը գիրգնահատելի էր, հրաշալի եւ գեղարուեստական էր նուագը, անկասկած համերգին յաջողութեանը շատ նպաստեց:

Այսօր հոգեկան մեծ վայելք եղաւ ինծի համար եւ թէ բոլոր ներկաներուն համար, որ վայելեցինք այս փառաւոր համերգը: Տաղանդաւոր պատանիներու համերգը, հիացմունք, զարմանք եւ մեծ ուրախութիւն կը պատճառէ

Մար.ը էջ 18

ԱՐԵՒ ԺՈՐԱ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
Ժորա Կարապետեան այս բանաստեղծութիւնը կը ձօնէ Գիւմրիի պատանի աստղերուն

Լուսաբացի արեւ, Զայաստանից եկար,
 Իմ հետքերով եկար, իմ կարօտի Արեւ,
 Քարքարոտ ու մոլոր ճամբաներով օտար
 Եկար ու ինձ գտար, ապուպապիս Արեւ:

Սօրս նման գիրկդ լոյսով լիքը՝ եկար,
 Մէջդ ինչքան սէր ու ներում կայ դեռ, Արեւ.
 Սօրս նման հեռուս թողել եմ քեզ մե՞նակ,
 Սօր պէս սիրտդ էլի վրաս տաք է, Արեւ:

Ինչու ի գուր էդքան երկար ճամբայ եկար,
 Ինչպէս պիտի դու ինձ տաքացնես, Արեւ,
 Ես էս պաղ ու պանդուխտ աշխարհի մէջ օտար,
 Թէկուզ քեզ հետ էլի անարեւ եմ, Արեւ:

Մի քիչ կամաց գնա, թող քեզ նայեմ երկար,
 Կարգին օր ու արեւ չտեսած իմ Արեւ,
 Մեր դարդերը հատ-հատ արի պատմենք իրար,
 Իմ մորթուած, անտուն, թափառական Արեւ:

Ափսո՛ւ, ինչքան արագ սարի ետեւն անցար,
 Դու քո կարօտն առար, իմը՝ մնաց, Արեւ.
 Արդեօք, կը գա՞ս էլի, թէ՞ գնացիր անդարձ,
 Կը տեսնի՞մ քեզ նորից, մայրամուտիս Արեւ:

Օրը մթնեց արդէն, դու Զայաստան հասար,
 Սիրտս, կարծես, մի քիչ թեթեւացաւ, Արեւ.
 Որ դու ինձնից, գո՞նէ, մի բան հետդ տարար՝
 Աչքս մէջդ մնաց, Զայաստանիս Արեւ:

ՓԱՂՈՒԹԱՅԻՆ

ԹՈՐԳՈՍ ՓՕՍԹԱԾԵԱՆ Ի ՊԱՏՈՒԻ

Մեծաշուք եւ հանդիսաւոր արարողութիւն մըն էր այն երեկոն, որու ընթացքին, Ապրիլ 2, 2006, Կիրակի երեկոյեան, Հայց. Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Առաջնորդարանի դահլիճին մէջ, յարգանքի, գնահատանքի, եւ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ շքանշանի պիտի արժանանար գաղութիս ծանօթ անձնաւորութիւն՝ Թորգոմ Փօսթաճեան, իր գրական, կրթական, ազգային եւ բարեսիրական գործունէութեան 50-ամեակին առիթով:



Թորքոմ Փօսթաճեան

Նախ արժէ այս առիթը պատրաստուած յոբելինական յուշամատենը իրապէս գնահատել իր բովանդակութեան, նուրբ ճաշակին եւ լրջութեան համար, զոր բժախնդրութեամբ խմբագրած էր ծանօթ լրագրող Սարգիս Մաճառեան, Փօսթաճեանի վաղեմի բարեկամը եւ գրչակից ընկերը: Եկեղեցական, ազգային, գրական եւ բարեկամական լայն շրջանակի վկայութիւններով, շնորհաւորագրերով, նկարներով եւ արտասպումներով ճոխ այս տպագրական գործը իրապէս արժանի է գնահատանքի: Կ'արժէ նաեւ գայն պահել իր գրադարանային արժէքին համար:

Գերշ. Տ. Յովնան Արք. Տէր-տէրեանի հովանաւորութեան տակ դրուած յայտագիրը բազմաթիւ միութեանց, որոնց շարքին Հ.Բ.Ը.Մ.ը, Թէքէեան եւ Նոր Սերունդ Մշակութային Միութիւնները, Պոլսահայ եւ Իրանահայ միութիւնները, Ամերիկայի Հայ Գրողներու Միութիւնը եւ Մաշտոց Գոլէճը: Այս կը նշանակէր նաեւ այն գնահատանքը որ յարգուող անձնաւորութիւնը կը վայելէր գաղութիս մտաւորական, մշակութային եւ կրթական շրջանակներէն ներս: Բացի Առաջնորդ Սրբազանէն, ղեկավարութեամբ նախկին Առաջնորդ՝ Վաչէ Արք. Յովսէփեանի, եկեղեցական կարեւոր դաս մը նաեւ ներկայ էր հանդիսութեան:

Անցնինք յայտագրին, զոր ձեռնհասօրէն եւ ճարտարօրէն վարեց Մաշտոց Գոլէճի յարգարժան նախագահ Տօքթ. Կարպիս Տէր Եղիայեան, որ նաեւ կազմակերպիչ յանձնախումբի նախագահն էր:

Ամերիկեան եւ հայկական օրհներգներու նուագումէն ետք, դաշնակի վրայ նուագուած Փրոֆ. Լեւոն Աբրահամեանի կողմէ, բացման խօսքով ելոյթ կ'ունենար օրուայ հանդիսավարը, եւ իր խանդավառ, կուռ եւ նպատակային խօսքերով անհրաժեշտ մթնոլորտը կը ստեղծէր յաջող երեկոյի մը համար, որ այդպէս ալ պիտի

Յոբելեար՝ Թորգոմ Փօսթաճեան ընթանար:

Յուզիչ, յուսադրիչ եւ ներշնչող ելոյթ պիտի ունենային յոբելիարին թոռնիկները, որոնց շուրթերուն վրայ հայերէն լեզուն պիտի փայլէր, մանաւանդ կատարումով Փօսթաճեանի երկու քերթուածներու ընթերցմամբ:

Յստակ առողանութեամբ, բեմական ճարտար ներկայութեամբ, թէեւ, իր խոստովանութեամբ, քիչ մը երկար, յոբելիարի կեանքին ու գործին գրախօսական վերլուծումը կատարեց, Սան Ֆրանսիսքոյէն, առակագիր, գրող Եզնիկ Բալայեան: Նման յոբելեաններու առիթով լաւ կ'ըլլայ որ նաեւ որոշ մանրամասնութիւններով ճանչցուի գրողին ստեղծագործական կեանքի մանրամասնութիւնները ինչ որ արժանաւոր կերպով կատարեց Եզնիկ Բալայեան, արժանանալով շերտ ծափահարութեանց:

Շնորհաւորական գիր եւ տախտակ մը յանձնուեցաւ Գոնկրէսի անդամ «Brad Sherman»-ի ներկայացուցիչին կողմէ: Նոյնպէս բազմաթիւ գնահատագրեր եւ շնորհաւորական գրութիւններ ուղարկած էին պետական եւ քաղաքական բազմաթիւ անձնաւորութիւններ, նախագահ Պոլշէն սկսեալ: Ծանօթ նկարչուհի Սիւզան Սեւոյեան գեղեցիկ պատառ մը յանձնեց յոբելիարին:

Յայտագրի երկու կարեւոր բաժիններ՝ էլիզ Թաշճեանի մեներգները, դաշնակի ընկերակցութեամբ Փրոֆ. Լեւոն Աբրահամեանի, եւ Սէսիլ Քէշիշեան գեղեցիկ ընթերցումները որոշ չափով խոցելի եղան բարձրախօսային խայտառակ մեղանչումներուն պատճառաւ:

Մերուծան Մարգարեանի ջութակային կատարումները ուղղակի զգլխիչ եւ հաճելի էին:

»ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹ« ԵՐԵՔ ԴԱՍԱԳԻՐՔԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ



Ուրբաթ, 31 Մարտ, 2006, երեկոյեան ժամը 8:30ին ներկայ գտնուեցանք «Հայ Մշակոյթ» դասագիրքերու երեք հատորներու ներկայացման հանդիսութեան, որ տեղի ունեցաւ Սահակ Մեսրոպ Հայ Քրիստոնեայ Վարժարանի Երկրորդական Բաժնի դպրոցավայրի Lee Chapel մատուռին մէջ, Փասսատինա:

Իր բացման խօսքին մէջ օրուան ձեռնհաս հանդիսավար՝ Մաշտոց Գոլէճի տնօրէն Տօքթ. Կարպիս Տէր Եղիայեան շեշտեց կարեւորութիւնն ու անհրաժեշտութիւնը սոյն երեք դասագիրքերուն, որոնք պիտի դրոշմեն հայ պատանիին եւ ընթերցողին մտքին մէջ կարեւորութիւնն ու արժէքը հայ լեզուին եւ մշակոյթին:

«Հայ Մշակոյթ» դասագիրքերու երեք հատորները հերթաբար պատշաճօրէն ներկայացուցին՝ Սոնա Պատալեան (Ա. հատոր), Ռիթա Տէմիրճեան (Բ. հատոր) եւ Մարալ Ոսկեան (Գ. հատոր):

Գեղարուեստական յայտագրով ելոյթ ունեցան Սահակ Մեսրոպ Վարժարանի աշակերտները:

«Հայ Մշակոյթ» դասագիրքերու աշխատասիրութեան, պատրաստութեան ու համադրումի հեղինակ, արուեստագէտ դաշնակահար Վաչէ Մանկրեան ելոյթ ունենալով յայտնեց իր խորին շնորհակալութիւնները Սահակ-Մեսրոպ դպրոցի տնօրէնութեան, հոգաբարձութեան եւ իր գործին յաջողութեան մասնակից բոլոր անհատներուն: Յատկապէս յիշեց իր ծնողքը, որ մանուկ հասակէն իր մէջ սերմանած են սէրը հանդէպ հայ գիրքին, երաժշտութեան, լեզուին եւ մշակոյթին:

Դպրոցի տնօրէն՝ Լեւոն Ֆիլեան, հոգաբարձութեան ատենա-

պետ՝ Աբրահամ Հալչպլեան, վերապատուելիներ՝ Տիգրան Շամլեան եւ Վերապատուելի Յովսէփ Մաթոսեան, բոլորն ալ իրենց կարգին յայտնեցին շնորհակալութիւն այս յոյժ կարեւոր երեք հատորներու պատրաստութեան եւ համադրումի հեղինակ Վաչէ Մանկրեանին ու իր աշխատակիցներուն:

Տօքթ. Կարպիս Տէր Եղիայեան հանդիսութեան աւարտին Մաշտոց Գոլէճի անունով յուշատախտակ մը նուիրեց Վաչէ Մանկրեանին:

Գնահատելի է Սահակ Մեսրոպ Հայ Քրիստոնեայ Երկրորդական վարժարանի տնօրէնութիւնն ու հոգաբարձութիւնը սոյն անկողմնակալ երեք դասագիրքերու հրատարակութեան համար:

Չարականները պիտի կարծեն, թէ ուշացրած է այս դիմանկարը, բարեացականները՝ թէ ուշացրած է: Հոգ չէ: Երկուստեք պարագային էլ՝ լաւ է ուշ կամ ուշացուած, քան երբեք: Յիրաւի, այդպէս է տակաւին: Սակայն ինձ համար կան առաւել թանկ հասկացութիւններ ու հասկացողութիւններ, որոնք վեր են բոլոր կարծեսներից: Միշտ էլ գրական դիմանկարի փորձը կէս կատակ, կէս լուրջ է լինում, որպէսզի պահպանուի կեանքի իմաստասիրական նժարաչափեան հաւասարութիւնը: Ոչ խոժոռ լըջանք, ոչ էլ ցանցառ հանաք: Հաշուեկշիռ ու ոչինչ: Հազարամեակների կենսափորձ, մարդկայինի հատուցման հրամայական, անշահախնդիր յարգանք... ընդդէմ հիւանդագին դրսեւորումների ու խաթարիչ բանասրկութիւնների, ընդդէմ կռուականութեան, պառակտիչ գործարքի, բայց միշտ՝ յանուն ճանապարհի, ճշմարտութեան եւ կեանքի... Պօղոս Առաքեալին մինչեւ արձակագիր Պօղոս Գուբելեանը, թուում է, որ ոչինչ է փոխուած հասարակական փոխյարաբերութիւններում:

Փտախոը հասցէ ու հայրենիք չունի: Տիեզերքն է անոր թատերաբեւը եւ մարդու ախտաւոր հոգիս՝ գայն սնանողն ու յաւերժացնողը...

Սեռով սպիտակի վրայ եզրակացնում է արձակագիրը եւ ծաւալում է 272 էջերով մի տրագիկոմեդիա/գաւեշտացաւախաղ/, որի ժամանակն ու տարածութիւնը հազարաւոր մղոններով հեռու են հայ ընթերցողի աւօրեայից: Հարցապնդումը հրատապ է ըստ հեղինակի:

Գեղարուեստական գրականութեան մէջ այս ծանրաբեռ ու պատասխանատու ԵՍ ԵՄ-ը տաժանակրութեան պատիժ է, որ բարեյաջող տեղ հասցնելուն պէս պիտի յաջորդէ բերկրանքի պատիւը՝ ԻՄՆ է: Թողնենք Մերն է-ի հասկացութիւնը: Դառնանք ու փառաբանենք Միթէ-ն: Ցեղասպանութիւնից վերապրած ժողովրդի վտարանդի գաւակը շուրջ քսան տարի ապրելով սեւ մայրցամաքում, բախտ ու յաջողութիւն որոնելով, հիասթափուեով տեղի բարբերից, ասելիքի մի գուգահեռ յայտնագործելով՝ հռչակեց իր գտածոն-փտախոտը, որ համամոլորակային հնչողութեան կը կարօտի: Փտախոտ ամենուրեք եւ ամենինչում: Համահարթեցման թիւ մէկ թշնամին, իրենից սերուածը, իր անկման բանալին: Գրողի քաղաքացիական իրաւունքն ու պարտականութիւնը միշտ արթուն պիտի պահեն ստեղծագործող խիղճն ու թելադրող ոգին: Պօղոս Գուբելեանը երեւում է իր շալակած բեռան տակ, ուր որ է կը պցի այն, խոր ու թարմ շունչ կը քաշի եւ կ'անցնի իր տնամերձը ինամելուն, այսինքն՝ կը գրի դարձեալ հայերից իրապատումներ... Թողնենք սա մօտ ապագային ու գանք գրողական կենցաղավարութեան անհրաժեշտութեանը: «Իրապաշտները չեն, որ կը ստեղծեն աշխարհի պրոբլեմները, այլ քիթի ծակ չունեցող իտէալիստները, որոնք իրենց հիւանդ ուղեղներէն վրիպած գաղափարներով կը մոլորեցնեն բարեմիտ գանգուածները»:

Տիպաբանական մի ընդհանրացում իտէալիստների սինթորութեան մասին: Այլ բան է իրապաշտների հանգամանքը: Գրողը բարձր է կանգնած իրապաշտութիւնից, որովհետեւ աղամանդը դիտում է ապրելու միջոց, ոչ թէ հարստահարման թանկ ու կրակ աղբիւր: Սա է գրողի, եթէ կ'ուզէք, դասակարգային մօտեցումը որպէս մտաւորականութեան ներկայացուցիչ: Վիճելի չհամարելով օտարոտի թեման, յամենայնդէպս հայու շունչ կայ մէջը, արգելուած պտուղ էլ չի ուրիշի հոգսը: Վերջապէս գրողի անհատական կամքն է թեմայի ընտրութիւնը, բայց... անյարգի համարելով ինչ-ինչ արտայայտութիւններ, կոպիտ ընդգծումներ, վուլգար անդրադարձներ, պիտի նշեմ, որ այս արձակագիրը բաւական է քաջութիւն ունի նոր խօսք բերելու համար, ասելիքը տեղ հասցնելու գիտակցուած մարտավարութեամբ է գինուած եւ չի մոլորում իր իսկ հարցադրումների սարդոստայնում: Յարգանք տածելով մեզանում կայացած «րաֆֆիականութեան», «սունդուկեանականութեան», «չիրագականութեան», «չարենցասեւակեանական» դպրոցների հասցէին, որոնք առաջնորդուել են նոյն ճանապարհով, նոյն ճշմարտութեամբ, նոյն կեանքով, մատնաչէնք, որ գրականագեղարուեստական, ազգային-ազատագրական, բարոյահոգեբանական արժէքների հանրագումարներ են:

Հայ հաւաքական եւ արդի գրականութեան պատմութեան մէջ առանձին յարգանք ու պատիւ է վաստակել Սփիւռ.քահայ գրականութիւնը՝ միակ իրաւաջողորդ մեր Արեւմտահայ գրականութեան: Այս երկրորդուած վիճակը նոյն գոյապայքարի անքատկելի մասն է եւ պարտական է իրեն առաջ մղող, տարածութեան ու ժամանակի դէմ կռիւ տուող շնորհաշատ անուններին: Բանաստեղծական արուեստի անդաստանում փայլատակած, լուսեղէն հեղնակութիւններից ետ չմնացին սփիւռ.քահայ արձակագիրները՝ Յակոբ Մնձուրի, Շահան Շահնուր, Ջաւէն Մելիք Սիւրմէլեան, Անդրանիկ Ծառուկեան, Յակոբ Կարապետ, Անդրանիկ Սարգիս Վահան, Ռոբերտ Հատտէճեան, եւ էլի տասնեակ շնորհաբաշխներ: Երախտագիտօրէն յարգելով վերոյիշեալների գրական վաստակը, պիտի կանգ առնեմ նրանցից կրտսերի՝ Պօղոս Գուբելեանի ստեղծագործական դիմանկարի ամբողջացման վրայ: Խոհուն մշակ, պրպտող անհատականութիւն, ուղղամիտ գրչակից: Մակդիրներից ոչ մէկն էլ չափազանցութիւն չէ իմ կարծիքով, բոլորը միասին ջանում են յստակեցնել այս անհատականութեան ստեղծագործական դիմանկարի բնորոշ կերպարայնութիւնը: Մարդ, քաղաքացի, գրող: Տագնապի ազդանշան հնչեցնող.

Պօղոս Գուբելեանի «Փտախոտ» վէպի հերոսներից մէկը, որ հայ է եւ անունն էլ Վազգէն է, յայտնուելով այդօրինակ օտար եւ ամայի ճամբէքի վրայ, չի կարող ձերբազատուել իր արեան կանչից, յիշողութեան մամլիչ բեռից, որի մէջ անպայման 1915 քառանիշ թիւը կայ: Միլիոն ու կէս նահատակի յիշատակի պարտադրանք կայ չուրանալ: Եթէ կայ յանուն քրիստո-

նէութեան գոհուելու բերումով սրբերի շարքը դասուելու հրամայական, ապա ողջ հայ ազգը պիտի դասուի մեծարգոյ սրբերի շարքը, որովհետեւ 1700 տարի ապրել ու պայքարել է իբրեւ քրիստոնեայ մի ժողովուրդ, որի նկատմամբ միշտ էլ թշնամանք են տածել հարեւանները: Առաջիկայ մէկ հարեւանին է կպել հայեցի անէծքը: Քարտէզի վրայ չկայ երբեմնի ասորական կայսրութիւնը: Ինչպէ՞ս կարող է արձակագիրը սրանք մոռանալ իր աւօրեայ նստուածքներում: Աւելին, այդ ո՞ւմ է յաջողուել արմատներից կտրուած գոյատեւել ինքնուրոյն եւ առաջադիմել առանց ազգային պատկանելութեան: Անհնար ու անհեթեթ մի գաղափար է միջազգայնամոլութիւնը:

Եթէ մտովի փոխենք այդ երկրի անունը, այս մէջբերումը կը նայենք արդէն Հայաստանի տեսանկիւնից: Չէ ո՞ր մեր հայրենիքում էլ են նախընտրական կրքերը բոցավառում, ցաւօք սրտի, յաճախ անարդիւնք եւ անխելք: Եւս մէկ բնորոշում.

... Երբեք միլիոն հաշուող պետութեան մը ղեկավարը պարտաւոր էր նկատի առնել, թէ իրմէ եւ իր կուսակիցներէն զատ, ուրիշ բերաններ ալ գոյութիւն ունէին: (էջ 141):

Տարակարծութիւն չի կարող լինել: Պօղոս Գուբելեան հեղինակի գրական հոտառութիւնն է գուցէ, որ գլխիվայր շրջած է նիւթը: Գուցէ: Թող նա պնդի իր կերած Լեմոնը, մենք էլ կը պնդենք մեր հասկացած, այլակերպութիւնից ու

փոխաբերականութիւնց հեռու հայրենիքը: Սա գրողական վարպետութեան որոշակի մօտեցման խնդիրն է: Վերջապէս Ափրիկեան մի չորրորդական երկրահատուածի կեանքը, կենցաղը, բարբերը, պետականութիւնը ի՞նչ պիտի տար հայ ընթերցողին, որ գգայուն է, շուտա խաբուող չէ, այլաբանութեան կողմնակից չէ: Ծուռ հայելու մէջ նկատել ուղիղ դիմագիծ ու դիմանկար, սա պիտի լինի մեր գրչակցութեան շիտակութիւնը: Պօղոս Գուբելեան արձակագրի անմիջականութիւնը սնուում է մարդ Պօպոս Գիւբելեանի ապրելակերպից, նրա համոզմունքներից: Բնական տեղաշարժ է սա: Իւրաքանչիւր հեղինակ պեղում է իր անհատականութեան ընդերքը: Իւրաքանչիւր արուեստագէտ նախ ինքն է իր «նիւթը»: Իւրաքանչիւր ստեղծող/ստեղծագործող/անմեղ է կարծես, սիրտ տալու հարկը չկայ, մեղաւորը/դարձեալ գուցէ/ստեղծուածն է: Այս կնճռոտ խնդրի հարցում անմեղ ձեւանալ հնարաւոր չէ: Եթէ այդպիսին չես, կեղծելն իսկ կ'երեւալ:

Մեր գործընկերոջ-գրչակցի դիմանկարի համար շահեկան է նաեւ այն, որ կազմակերպուած է նա, պատրաստ ամէն մի դժուարութեան, ռասանց երկնչանքի, առանց ապակողմնորոշման, աւելին՝ պատրաստակամ է նաեւ իր նկատմամբ, երբ հարցը պիտի վերաբերի իր հերոսների պատկերասրահի անձեռմխելիութեանը: Արձակագիրը

Շար.ք էջ 18

ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ
Մեր Մկրտչեան Թատերախումբ
Կը Գերկայացնէ՝
ԱԸՆԿայցըթաց Թատերական Ներկայացում
Ուխիլիմ Օեյրափիի
ՍՍԱԼՆԵՐՈՒ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆԸ
Բնագրութեամբ՝
ՊԵՐՇ ՖԱԶԼԵԱՆԻ
Մասնակցութեամբ՝
Թատերախումբի ամբողջական կազմից
Տեղի կ'ունենայ
Շաբաթ, Ապրիլ 29, 2006
երեկոյեան 8ից
ACADEMY OF THE HOLY ANGELS
DEMAREST, NEW JERSEY
Տոմսերու գին. 45, 35 եւ 25 տոյար
Ապահովելու համար դիմել՝
Մարի Ջօքեան 201 947-4365
Օմարու Ադամեան 718 894-5878
Միապ Պօղոսեան 212 819-0097
TEKEYAN CULTURAL ASSOCIATION
GREATER NEW YORK CHAPTER
JUBILEE CELEBRATION
HONORING
BERGE FAZLIAN
RENOWNED ACTOR/DIRECTOR
FROM LEBANON
UNDER THE AUSPICES
H.E. ARCH. KHAJAG BARSAMIAN
PRIMATE OF THE EASTERN DIOCESE
KRIKOR SATAMIAN, LOS ANGELES
MASTER OF CEREMONIES
ON THE PROGRAM
GERALD PAPAZIAN, PARIS
DR. HIRANT MARKARIAN, NEW YORK
TAMAR HOVHANNISSIAN, LOS ANGELES
PROF. NISHAN PARLAKIAN, NEW YORK
NORA ARMANI, NEW YORK
VARTAN OGANESYAN, NEW JERSEY
GARINE KOCHARIAN, NEW JERSEY
SUNDAY APRIL 30, 2006
COCKTAIL AT 5:30 - DINNER AT 6:30
FOR TICKETS:
ARMINE ARAZ (732) 549-8963
MIRBAK BOGHOSIAN (212) 819-0097
SHAYOON ATAMIAN (718) 894-5878

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ԲԵՂՄԱՒՈՐ ԱՆՑԵԱԼ - ԼՈՒՍԱՇՈՂ ԱՊԱԳԱՅ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ ՏԱՐԻՆ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՄԱՅՆՔԸ

**ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷՋԵՐԷՆ ՔԱՂԵՑ
ԵՆՈՎ ՊԱԼԻԿԵԱՆ**

Հարստահարությունների շարքում կոտորածները շրջանին, երբ թուրքիոյ հայութեան համար դժոխային կեանք մը ստեղծուած էր, ահաբեկուածի եւ սարսափի մասնուած ժողովուրդը, մեծ ցնցումներէ աղէտահար, աւելի քան երբեք պէտք ունէր պաշտպան ձեռքերու հոգածութեան, դարմանելու համար իր վէճերը:

Այս անլետաճգելի պահանջին ընդառաջելով, 1906 Ապրիլ 15ին, Գահիրէի մէջ, Սբ. Զատիկուան օրը, կեանքի վերածնունդի ու յաւերժութեան, բրիտանացիական հաւատքի եւ անմահ յոյսի մեծագոյն տօնին, որ նաեւ հայկական եղեռնը չի շեցնող վհատ իրականութեան մէջ ալ սփոփարար հորիզոններու երեւումը կը խորհրդանշէ, Պօղոս Նուպար Փաշա, քանի մը ազգասէր ակնաւոր անձնաւորութիւններու հետ, իրագործեց զաղափարը համագրային կազմակերպութեան մը, որ բարեգործական այլազան միջոցներով հետապնդէ ազգապահպանութիւն եւ հայրենաշինութեան իտէպլի նուիրական գաղափարը:

Այդ համագրային կազմակերպութիւնն է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը (Հ.Բ.Ը.Մ.): Նախագահ ունենալով Պօղոս Նուպար Փաշան եւ փոխ նախագահ՝ Եագուպ Արթին Փաշան (Կաթողիկէ համայնքէն), զաւակը՝ Յակոբ Արթին Փաշա Չրաքեանի՝ Եգիպտոսի Արտաքին Գործոց նախարար:

Եագուպ Արթին Փաշան փարիզի Միութեան Սամուէլ Մուրատ վարժարանին մէջ հայեցի կրթութիւն ստանալէ ետք, համալսարանական ուսումը կը շարունակէ Ֆրանսայի, Անգլիոյ եւ Գերմանիոյ մէջ, մասնագիտանալով պատմութեան, գրականութեան եւ լեզուաբանութեան մէջ: Դոկտոր օրէնադրագէտ՝ ան Հ.Բ.Ը. Միութեան ամենէն պատկառելի դէմքը կը դառնայ: Անոր ծառայութիւնները եւ նուիրումը անգնահատելի եղած են Հ.Բ.Ը. Միութեան հիմնումին ու համագրային կազմակերպութիւն մը դառնալու աշխատանքին մէջ:

Հայաստանեայց Առաքելական եկեղեցին եղած է հայոց Մայր Եկեղեցին, հայ պետականութիւնը փոխարինող հաստատութիւնը: Երբ Օսմանեան կառավարութիւնը կը ճանչնայ Կաթողիկէ եւ Աւետարանական համայնքները իբր ինքնուրոյն եւ անկախ եկեղեցիներ, հայկական կազմակերպութիւններու եւ հայերու մեծամասնութեան կողմէ անոնք կը նկատուին հայադաւ, կրօնափոխ եւ չեն արտօնուիր նպաստելու, մաս կազմելու ազգային կեանքին, կուսակցութիւններուն եւ միութիւններուն:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը (Հ.Բ.Ը.Մ.) եղաւ այն միակ կազմակերպութիւնը, որ մերժեց խտրականութիւնը եւ անհանդուրժողութիւնը: Առաջին անգամ ըլլալով, իբր ազգային կազմակերպութիւն մը, յայտարարեց թէ՛ «Հ.Բ.Ը.Մ. իր կազմին եւ գործելակերպին մէջ չզոյնէր խտրականութիւն սեռի, կրօնական դաւանանքի կամ համոզումի»: Ամէն

հայ, ինչ դասակարգի, կուսակցութեան կամ համայնքի ալ պատկանի, կրնայ անդամակցիլ այս Միութեան, երկու պայմաններով.

ա. Հայ ըլլալ, կամ մասնակի ծագումով հայ որեւէ անհատ, ինչպէս նաեւ անոր ամուսինը եւ զաւակները, որոնք կը յարգեն Հ.Բ.Ը.Մ.ի նպատակները:

բ. Հ.Բ.Ը. Միութեան մէջ պէտք մտնայ իր կուսակցական ըլլալու հանգամանքը (եթէ է), պէտք նուիրուի ազգապահպանման, հայրենաշինութեան ու մեր ժողովուրդի եւ եկեղեցիի միասնականութեան գաղափարին:

1912ին, Հ.Բ.Ը.Մ.ը կոչ ըրաւ համայն Հայ Առաքելականներուն. «Միրեցէք ձեր հայ Կաթողիկէ եւ Աւետարանական եղբայրներ, նոյնիսկ եթէ անոնք ձեզմէ հեռու փախչին. դուք անոնց մօտեցէք, մի մտնաք որ միեւնոյն ազգին զաւակներն ենք: Իսկ դուք՝ մեր պատուական Կաթողիկէ եւ Աւետարանական եղբայրներ, դուք նաեւ սիրեցէք ձեր Առաքելական եղբայրները, մօտեցէք անոնց. եկեղեցիներուն մէջ ունեցէք ձեր ինքնուրոյն պաշտամունքները, բայց եկեղեցիէն դուրս հայերու մէջ խտիր պէտք չէ դնէք. մի մտնաք, ամէն բանէ առաջ հայ ենք»:

Հ.Բ.Ը. Միութիւնը անմիջապէս քայլեր առաւ իրականացնելու իր այս յորդորը, թելադրելով որ ուրիշներ ալ հետեւին իր օրինակին:

Հ.Բ.Ը. Միութեան Կեդրոնական Վարչութեան եւ մասնաճիւղերու մէջ, հարիւրաւոր կաթողիկէ անձնաւորութիւններ գործօն դեր ու պաշտօն ունեցած են, ծառայելով ազգապահպանման, հայրենաշինութեան եւ հայապահպանումի սրբազան գործին:

Տասնեակ մը օրինակներ՝ բազմահարիւր նուիրեալներէն.

Եագուպ Արթին Փաշա - Հիմնադիր, փոխ նախագահ

Տ. Տիրան Փիլիպոսեան - Կեդրոնական Վարչութեան անդամ:

Գերշ. Հ. Գաբրիէլ Մէնէվիշեան - Ատենապետ՝ Վիեննայի նոր հիմնադրուած մասնաճիւղին, հիմնադիր շատ մը մասնաճիւղերու Աւստրո-Հունգարական կայսրութեան մէջ:

Տիրար Արտաշէս Հիւրմիւզ - Գանձապահ՝ Պոլսոյ նոր մասնաճիւղին:

Հայր Պօղոս Արիս - Հ.Բ.Ը.Մ. - Հ.Ե.Ը.ի հիմնադիրներէն, Կեդրոնական Վարչութեան անդամ:

Գեր. Ա. Արփարեան, Հայր Յովհաննէս Վրդ. Միսերեան, Գեր. Նորայր Վրդ. Պողարեան, Գեր. Յովսէփ Եպս. Սարուխանեան, Արհի. Ս. Փարեան Գերպ., Գեր. Խոսրով Պէհրիկեան, Արհի. Անտոն Եպս. Պահապանեան, Գեր. Ներսիմեան, Գեր. Վարդան Վ. Հացունի, Գեր. Մեսրոպ Վ. Հապոզեան, Բր. Հ. Պողիկ Սամուէլեան, Գեր. Վարդան Վ. Գասպարեան, Գեր. Պօղոս Վրդ. Գաթթանեան, Գեր. Մ. Վրդ. Արշակունի, Գեր. Արսէն Վրդ. Վեհունի, Գեր. Մամբրէ Վրդ. Գալֆայեան, Գեր. Մուշեղ սրբ. Սերոբեան, Գեր. Ստեփան Վրդ. Ստեփանեան, Գեր. Տիրայր Մ. Վրդ. Մարգարեան, Արհի Գուրգեան Գերպ., Գերպ. Մեսրոպ Վրդ. Քէշիշեան, Սարգիս Սարգեան, Արհի. Իգնատիոս Արք.

Մալոյեան, Գերպ. Պօղոս Վրդ. Գասպարեան:

Մերտինի շրջաններուն մէջ Հ.Բ.Ը. Միութեան տեղական առաջին մասնաճիւղը 1913ին կը հիմնէ Արհի. Իգնատիոս Արք. Մալոյեան, Առաջնորդ Կաթողիկէ համայնքին:

Այս մասնաճիւղին նորընտիր վարչութեան անդամներու մեծամասնութիւնը Կաթողիկէ համայնքէն նուիրեալ եւ հայրենասէր անձնաւորութիւններ էին:

Հ.Բ.Ը. Միութեան նիւթական օժանդակութեան շնորհիւ, Գերպ. Պօղոս Վրդ. Գասպարեան հայերէնի դասընթացներ կը հաստատէ արաբախօս հայկական վարժարաններու մէջ:

Հ.Բ.Ը. Միութեան այս երկու պատուական Կաթողիկէ հոգեւորականները թուրք ցեղասպաններու ձեռքով կը նահատակուին, միանալով Հ.Բ.Ը. Միութեան բազմահար նուիրեալ նահատակներու շարքին:

Բազմաթիւ են նոյնանման Կաթողիկէ հոգեւորականներու անձնաւորութիւններ, որոնք Հ.Բ.Ը. Միութեան միջոցով միշտ ծառայած են հայապահպանումի սրբազան գործին:

Կեսարիոյ մէջ, 1912ին, Հ.Բ.Ը. Միութեան Ատենապետ եղած է Գերպ. Մեսրոպ Վրդ. Քէշիշեան, փոխ-ատենապետ՝ Սարգիս Սարգեան, շրջանի ամենէն գործունեայ վարչութիւնը, որոնք շարունակած են իրենց նուիրական ծառայութիւնները՝ Մերսինէն մինչեւ Փարիզ, մինչեւ իրենց կեանքի վերջին օրերը:

Հաճընի, Մարաշի եւ շրջակայքի բոլոր հայասոճ քաղաքներու մէջ, Գերպ. Իգնատիոս Վրդ. Թերզեան եւ Գերպ. Եղիշէ Արք. Կարոյեան, անգնահատելի նուիրումով, Հ.Բ.Ը. Միութեան միջոցաւ ծառայած են տեղուց հայրենակիցներուն:

«Մեզի համար, այս հովիւներն ու հովուապետերը միշտ պատուոյ տեղ մը կը գրաւեն, որպէս Հ.Բ.Ը. Միութեան առաքելներն ու գործիչները»:

«Բարեգործականը կը խօսի գործէն վերջ ու ոչ գործին տեղ»:

Հ.Բ.Ը. Միութիւնը կը պատկանի բոլոր հայ համայնքներուն անխտիր եւ բոլոր ազգային կազմակերպութիւններուն: Ան արժանացած է ամենաբարձր գնահատանականներուն ազգին բոլոր իսկուրուն եւ մինչեւ իսկ օտարներուն կողմէ:

Իր հիմնադրութեան առաջին օրերուն իրենց համակրանքը, օրհնութիւնները, կոնդակները դրկած են հիմնադիրներուն եւ վարիչ անդամներուն՝

Երջանկայիշատակ Մ. Խրիմեան Հայրիկ, Կաթողիկոս Ամենայն Հայոց,


Վեհ. Սահակ Բ. Խապայեան, Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Գերշ. Պօղոս-Պետրոս ԺԳ. Թերզեան, Հայ Կաթողիկէ Կաթողիկոս-Պատրիարք Մեծի Տանն Կիլիկիոյ,

Վերապատուելի Հայկազուն Եագուպեան, Հովուապետ Աւետարանական Համայնքի:

1910 Յունուար 1ին, երեք յարանուանութեանց պատկանող ընտրեալ անձնաւորութիւններու մասնակցութեամբ, տեղի ունեցաւ խորհրդակցական հանդիպում մը, Հ.Բ.Ը. Միութեան մասնաճիւղեր հիմնելու համար Պոլսոյ մէջ: Ասոր յաջորդած Մարտ 3ին գումարուած հիմնադրական ժողովը ընտրած է իր առաջին մասնաճիւղի անդամները, հովանաւորութեան տակ երեք յարանուանութիւններու պետերուն, որոնք իրենց օրհնութեան եւ յաջողութեան աղօթքներով ու մաղթանքներով փակուած հռչակած են այս առաջին ժողովը:

Կաթողիկէ համայնքի կրօնապետները ներկայ գտնուած են յանձին Արհիպպետ Անտոն Եպս. Պահապանեանի եւ Գեր. Մ. Վ. Պէհրիքեանի: Ուշագրաւ է նաեւ որ Պոլսոյ մասնաճիւղի առաջին մեծ նուիրատուութիւնները կատարուած են Հայ Կաթողիկէ ազգայիններու կողմէ՝ Յովհաննէս Պէյ Ալլահվերտեան

Շարք էջ 17



ԱՅ ԱՐԺԵՆԵՐ

ԳԻՏՆԱԿԱՆ ԲԺԻՇԿՈՒ

ԱԼՖՐԵՏ ԴԱՆԻԷԼԵԱՆ

ՎԱՐԴԱՆ Ա.Ի. ՔԶՆՅ. ՏԻԻԼ ԿԵՐԱՆԱՆ

Դարու մարդկային նախա- սիրութիւնը, նիւթապաշտ հակում- ներէ խթանուած, կ'ուզէ որ մար- դուն մէջ գնահատուին, ոչ թէ իր բարոյական եւ հոգեւոր արժանիք- ները, այլ՝ մարմնական հեշտավառ ցանկութիւնները:

Աւելի հեշտ է, կ'ըսէ ժողովր- դային իմաստութիւնը հաշուել մարդուն գլխուն մագերը, քան թէ իր մարմնոյն անյագուրդ պահանջ- ները:

Վաղնջական դարաշրջաննե- րուն՝ գրականութիւնը եւ գեղար- ուեստը միահեծան կ'իշխէին մարդ- կային տեսլական նկրտումներուն վրայ:

Այսօր՝ այդ գեղաճանաչ ար- ուեստները դադրած են ճառագայ- թելէ ու իրենց պատուաբեր պարա- պոլութիւնները բրաւած են մոլու- թիւնները:

Տարականոն նորութիւնները եւ մգլտած մտայնութիւնները կը նախընտրեն տեսնել մարդուն կեր- պարին վրայ, սատանային դրամա- նիշին շլացուցիչ փայլը, ոչ թէ աւետարանի բարոյականը եւ առա- քինութիւնը:

Հայ գրականութեան մէջ իրենց գրավաստակով անմահացած նա- հատակ գրագէտները ապրեցան հա- մեստութեան ստուերներուն մէջ ներքաշուած եւ անոնցմէ շատերը, առանց հասարակաց երախտագի- տութենէն իրենց արդար հատու- ցումը ստանալու, մարտիրոսական մահով, փշէպսակը իրենց գլխուն, անցան յաւերժութեան:

Անոնցմէ շատ քիչերը՝ բախ- տը ունեցան իրենց մայրամուտի շողերուն մէջ տեսնելու իրենց բե- դուն վաստակին ճառագայթումը: ***

Այս յօդուածագրութեամբ, նպատակս եղած է, գրասէր հասա- րակութեան գնահատութեան յա- աճնել բառարանագէտ ու գրակա- նագէտ, բժիշկ Ալֆրէտ Դանիէլեա- նի լոյս ընծայած վերջին մասնա- գիտական ուսումնասիրութիւնը, որ իր նախորդ հրատարակութիւննե- րը գերազանցող ծաւալուն բառա- րան մըն է, քառասուն տարիներու խորագնահատ մասնագիտական աշ- խատութիւն մը, որ ոչ միայն կը պատուէ Հեղինակին հսկայ վաս- տակը, այլ նաեւ, հայ գրականու- թիւնը, որ կը հիւրընկալէ իր մէջ, իր տեսակին մէջ, անհամեմատելի բառագիրք մը, որուն նմանը ցարդ լոյս է տեսած:

Կոթողական հրատարակութիւն մըն է, ես կոչեր եմ գայն, առողջա- պահութեան աւետարան, որ Աստ- ուածաշունչին նման, պէտք է սնա- րին քով պահուի եւ գայն ամենօր- եայ ընթերցումներով, հմտանալ բժշկական գաղտնիքներուն:

Բոլոր բառերը մասնագիտո- րէն բացատրուած, մեծապէս կ'օգ- նեն հիւանդին ինքնաբուժումին, առանց բժշկին գրասենեակը այցե- լելու:

Այս պատկառելի հատորը կը պարունակէ շուրջ քառասուն հա- զար բառ, որմէ կրնան օգտուիլ բժիշկներն ալ:

Բժշկութեան հետ սերտ աղերս ունեցող, կենդանաբանական, բու- սաբանական, դեղագործական, հո- սքանական իր յարակից ճիւղաւո- րումներով, գիրքին պարունակու- թիւնը կը դարձնեն յոյժ շահեկան եւ հետաքրքրական:

Արտակարգ իմացականութիւն մըն է այս հանրագիտարան մարդը, որ համեստութենէն ինքզինք ետ քաշած է, հանրութենէն ծածկուե- լու նպատակով: ***

Այս գնահատական տողերը նպատակ չունին փրփրականտը հիւ- սելու բառարանին, ոչ ալ ներբողե- լու հեղինակին գիտական հմտու- թիւնը: Իր հարուստ գրավաստակը եւ իր լոյս ընծայած չորս ծաւալուն հատորները, անհերքելի վկայու- թիւններ են իր գովելի արժանիք- ներուն:

Նպատակս է, հանրութեան ան- ծանօթ այս գիտուն բառարանա- գէտ բժիշկը, ալեւորութեան մէջ խորացած տարիքին, ծանօթացնել գրասէր հատարակութեան իր գրա- կան հարուստ վաստակը, որ օր մը իր ժողովուրդէն անտեսուած, ան- ծանօթ մարդու անփառունակ ճա- կատագրով չհեռանայ աշխարհէն:

Ինծի համար հնարաւոր պիտի չըլլար արդար գնահատումով բա- րացուցել իր աշխատակից կեանքը, եթէ մօտէն ու հանգամանօրէն չճանչ- նայի իր գրականագէտի անստգիւտ ձիրքերը: ***

Երեք տարի է ի վեր, նոյն թաղին մէջ կ'ապրինք, քանի մը փողոց հեռաւորութեան եւ յաճա- խադէպ հանդիպումներով, առիթը կ'ունենանք խօսելու ազգային ու համամարդկային իրադարձութիւն- ներու մասին:

Հակառակ որ յառաջացած տա- րիքի մէջ կը գտնուինք երկուքս ալ, ֆիզիքսապէս առողջ ենք, մնա- յուն տկարութիւն մը չունինք, որ անհանգիստ ընէ մեզ:

Պատիկ ու փոքրակազմ է ան, թուփի հասակով, տակաւի գի- րուկ, մշտաժպիտ, առոյգ ու աշ- խոյժ քայլուածքով, բերդի պէս ամուր, որ չի ցուցադրեր իր մեծ տարիքը:

Աշխատանքը չի յոգնեցներ գինքը երկար ժամերու սպառու- մով, ցուրտը եւ տաքը չեն ազդեր իր օրկանիքմին, օրուան բոլոր ժամերուն շարժման մէջ կը պահէ մարմինը, հետեւելով առողջապա- հական օրէնքներուն:

Այսօրը կ'ապրի, չի մտածեր վաղուան ու մահուան վրայ եւ չի շեղի իր խորարմատ համոզումնե- րէն:

Յորդակից է իր հմտութիւնը, կը խօսի՝ բայց չի շատախօսեր, գիտէ ժամանակը խօսելուն եւ լռե- լուն: Կենցաղագէտ ու բարեկիրթ անձ մըն է, բառին ամենաբարձր առումով: ***

Իր ծննդավայր Պարսկաստա- նի մէջ, վաթսուն տարի խղճմութեամբ եւ անշահախնդրու- թեամբ ինամած է իր հիւանդ յաճախորդները եւ փրկած շատե- րուն կեանքը իր խրախուսական պատուէրներով: Որպէս բժշկու- թեան հայր Հիփոկրատէսի հաւա- տարիմ աշակերտ՝ յարգած է իր երդումը եւ անբիծ պահած իր բժշկութեան վկայականը:

Անկախ իր գրագիտական ար- ժանիքներէն, պէտք է ծանօթանալ իր բարեմոյն անձնաւորութեան, պարկեշտութեան եւ խոնարհու- թեան մէջ ճառագայթող, որ կը տպաւորէ քեզ, գաղափարի ու մտածման արտայայտութեամբ:

Հայասիրութիւնը եւ հայրե- նասիրութիւնը իր մէջ արմատա-

ցած առաքինութիւններ են, աստու- ճէ խթանուած ու խրախուսուած ազային դրոշմ կու տայ իր ուսում- նասիրութիւններուն:

Հայ գրականութեան գանձա- տան մէջ չորս բժշկական ծաւալուն հատորներ կը մշտնջենաւորեն իր պանծալի անունը:

Իր մասնագիտական բառա- րանները մեր ժամանակի առաջ- նակարգ հրատարակութիւններ են, որակով ու արժէքով անհամեմա- տելի ու անմրցելի, որոնք ժամա- նակի ազդեցութեան չեն ենթարկ- ուիր ու մաշիր:

Ներկայ հայ իրականութեան մէջ, այն աստիճան նօսրացած են իր նման ազգօգուտ տիպարները, որ բազմութիւններու մէջ դժուար կը գատորշուին՝ հրապարակը ժխ- րող սոփեստներէն ու կիսագրա- գէտներէն:

Դիւրին չէ ժողովուրդի մը համար ճանչնալ ու գնահատել իր փառքերը: Եթէ բարեհոգի մարդիկ խղճահարութենէ թելադրուած չհրապարակեն անոնց ինքնութիւնը ու չբացայայտեն երկար տարիներու աշխատանքով արդիւնաւորած վաստակը, աններելի ապերախու- թիւն գործած պիտի ըլլան:

Ես խղճի մտօք կատարեցի նուիրական պարտականութիւն մը, այս յօդուածով հիասքանչ ուշադ- րութեան հրաւիրելով իմ բարե- միտ ընթերցողներս, որ ճանչնան ու պատուեն այս գիտուն մարդը իր հսկայ վաստակով:

Իր ընդարձակ զարգացումը առած է, ոչ թէ բարձրագոյն ու- սումնարաններէ, այլ իր առանձնա- սենեակին փոքր աշխարհին մէջ, ուր սերտած ու սորված է ութը լեզուներ, իր անվհատ ջանքերով, բաց պահելով իր կեանքին առջեւ աշխարհահռչակ գրականագէտներուն անմահ ստեղծագործութիւ- ները, որով հարստացուցած է իր մտաշխարհը հանրագիտարանի լիութեամբ:



Ութը ժողովուրդներու լեզու- ներով գինուած այս արտասովոր մարդը, խորաթափանց մտքով սուգ- ունեցաւ համամարդկային խոր- հուրդներուն մէջ եւ անկէ մակերե- սի վրայ բերաւ ինչ որ օգտակար ու բարիք է իր ժողովուրդին համար:

Այս ընտիր հայուն ապշեցու- ցիչ գիտութիւնը հմայած է գիս եւ հսկայացուցած է իր սքանչելի կեր- պարը:

Ամէն ինչ որ կը ցուցադրուի իր անձէն, խօսք, մտածում, համո- գում, իր կեանքին պատկերացումն է, իր գոյութեան պատմութիւնը:

Աստուծոյ եւ ազգին ընտրեալ գաւակները ինքնաբերաբար չեն ժամաներ աշխարհ, այլ կ'ուղարկուին Երկինքէն, աստուա- ծային առաքելութեամբ:

Փառք կու տամ Տիեզերակային, որ կեանք ու ներշնչում շնորհեց ինծի, որ կարողացայ այս յօդուածով ծանօթացնել, համեստութեան մէջ վարագուրուած բարձրարժէք հեղինակութիւն մը գրասէր հասարակութեան:

Թող պարգեւատու Տէրը արգասաւորէ կենաց տարիները կենսուրախ առողջութեամբ:

ՀՐԱՎԻՐԱՏՈՍՍ - INVITATION
Գ Ի Ն Ե Ձ Ո Ն

«Հայաստանի ազատագրված տարածքը և Արցախի հիմնախնդիրը»
Վերլուծական և փաստագրական նյութերի ընտրանի

Ժողովածուն կազմել, խմբագրել և ներկայացնում է «Հայոց Համագային ործակցություն» կազմակերպության տնօրեն, դոկտոր՝
Արմեն Այվազյանը

Չորեքշաբթի, Ապրիլի 12-ին, 2006, երեկոյան ժամը 8:00-ին

THE LIBERATED TERRITORY OF ARMENIA AND THE SETTLEMENT OF THE NAGORNO-KARABAKH CONFLICT
Selected analytical and documentary studies

Compiled, edited, and presented by doctor
Armen Aivazyan
Director of «Pan Armenian Commonwealth» organization

Wednesday, April 12, 2006, 2006 at 8:00 pm

Մուտքը ազատ **Glendale Royal Palace Free Admission**
210 S. Brand Blvd., Glendale

ՀԱՐԻՐԱՄԵԱԿԻ ՏԱՐԻՆ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԸ

Շարունակում է իր 14-էն

Եւ Ազնուակապ Օր. Աննա Չամիչ: Հ.Բ.Ը. Միութիւնը մեծ գնահատանքով եւ գոհունակութեամբ կը յիշէ այն օրհնութեան գիրքերն ու կոնդակները, որոնք արուած են Կաթողիկէ կաթողիկոսներու կողմէ:

Պողոս-Պետրոս ԺԳ. Թերզեան - Հայ Կաթողիկէ Կաթողիկոս 1910 Յովհաննէս Նազլեան - Արքեպիսկոպոս-Պատրիարք 1937

Գրիգոր-Պետրոս ԺԵ. Աղաճանեան - Հայ Կաթողիկէ Կաթողիկոս 1936-65

Իգնատիոս-Պետրոս ԺԶ. Պաթանեան - Հայ Կաթողիկէ Կաթողիկոս 1965-76

Հմայեակ-Պետրոս ԺԷ. Կէտիկեան - Հայ Կաթողիկէ Կաթողիկոս 1976-82

Յովհաննէս-Պետրոս ԺԸ. Գասպարեան - Հայ Կաթողիկէ Կաթողիկոս 1982-99

Ներսէս-Պետրոս ԺԸ. Թարմունի - Հայ Կաթողիկէ Կաթողիկոս Ինչպէս նաեւ Սբ. Ղազար Վանքի, Վիեննայի Մխիթարեան Վանքի, Չմմառի Վանքի կրօնապետները իրենց գնահատանքի եւ հիացումի, շնորհակալութեան եւ շնորհաւորութեան խօսքերը ուղղած են Հ.Բ.Ը. Միութեան:

Պէտք է նշել նաեւ թէ Սբ. Ղազար Վանքը փրկելու եւ անոր շարունակականութիւնը ապահովելու համար, Հ.Բ.Ը. Միութիւնը մեծազուժար նուիրատուութիւն մը ըրած է: Հ.Բ.Ը. Միութիւնը միշտ թիկունք կանգնած է Կաթողիկէ համայնքի կրթական եւ մշակու-

թային սքանչելի գործերուն: Օժանդակութիւն ըրած է 100 տարիներէ ի վեր Կաթողիկէ վարժարաններուն, իր հիմնադրութենէն մինչեւ այսօր:

Քանի մը օրինակներ կ'արժէ յիշել ճշմարտութեան սիրոյն:

1912-1913 թուականներուն, նպաստներ յատկացուցած է Քիլիսի, Պէլլանի, Մերսինի եւ Մարաշի կաթողիկէ վարժարաններուն, ինչպէս նաեւ Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան կարինէ վարժարանին:

1935 - Հ.Բ.Ը. Միութիւնը կը նպաստէ 139 ազգային, Կաթողիկէ եւ Աւետարանական վարժարաններու. Սուրիոյ մէջ՝ 62, Լիբանան՝ 28, Յունաստան՝ 24, Պուլկարիա՝ 9, Ֆրանսա՝ 12, Իրաք եւ Պաղեստին՝ 4:

1957 - Տուեալներու վրայ հիմնուած, Լիբանանի եւ Սուրիոյ Կաթողիկէ 22 վարժարաններու կը նպաստէ: Լիբանանի մէջ՝ 13, Հայկազնի մէջ՝ 4, շրջաններու մէջ՝ 2: Սուրի Մխիթարեան վարժարանին, Լը Ռեկի Հայ Կաթողիկէ վարժարանին կ'օժանդակէ նաեւ Պոլսոյ եւ Պէյրութի Հայ Կաթողիկէ եկեղեցիներու վերանորոգութեանց: Ասոնց կողքին, նոյնպէս կը նպաստէ Յունաստանի, Յորդանանի, Ամերիկաներեւ եւ աշխարհատարած կաթողիկէ վարժարաններուն: Նոյնանման օժանդակութիւն կ'ընէ Հայ Առաքելական եւ Հայ Աւետարանական վարժարաններու, որոնց թիւը հասած է մինչեւ 139: Կիլիկիոյ պարպումէն անմիջապէս յետոյ նպաստած է 99 վարժարաններու: Իսկ այժմ կը նպաստէ 52 վարժարաններու, որոնք կը պատկանին Առաքելական, Կաթողիկէ եւ Աւետարանական հա-

մայնքներուն, ինչպէս նաեւ դպրոցներու՝ որոնք կը պատկանին Համազգային, Նոր Սերունդ եւ Թէքէեան մշակութային կազմակերպութիւններուն:

Ահա փաստը Հ.Բ.Ը. Միութեան համազգային կազմակերպութիւն մը ըլլալուն: Հ.Բ.Ը. Միութեան ծառայութիւնները թէեւ կը տարածուին արտերկրի գանազան գաղութներուն վրայ, ան նոյնքան կարեւոր իր նպաստը կը բերէ հայրենիքի վերաշինութեան:

Մեր բոլոր յարանուանութիւնները միշտ եղած են Հ.Բ.Ը. Միութեան կողքին եւ Հ.Բ.Ը. Միութիւնն ալ իրենց հետ, գործակցաբար կը ծառայեն մեր ժողովուրդին հոգե-

ւոր, բարեսիրական, մշակութային եւ ընկերային զարգացման ու բարելաւման, հիմք ունենալով հայապահպանման սրբազան գործը:

Հ.Բ.Ը. Միութիւնը 100 տարիներ շարունակ աշխատեցաւ հինգ սրբութիւններու վրայ՝ Հայրենիք, Եկեղեցի, Մշակոյթ, Դպրոց եւ Երիտասարդութիւն, ծրագրելով եւ գործելով հայութեան ամբողջականութեան հաշտոյն:

Բոլոր յարանուանութիւնները կը սիրեն գործակցիլ Հ.Բ.Ը. Միութեան հետ, որովհետեւ անոր գործը Աստուածահաճոյ է. - Սէր, Բարեսիրութիւն եւ Անսակարկ Նուիրում:

Փառք Հ.Բ.Ը. Միութեան 100 տարիներու յարատեւ ծառայութեան:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year) * \$50,00 for USA
 * \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
 * \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State:----- Zip Code:-----
 Country: -----
 Tel :----- Fax : -----



الشرق مطعم

WAHIB'S MIDDLE EAST RESTAURANT
 "Where the East Meets the West"

MEDITERRANEAN - LEBANESE FOOD

BANQUET HALL

CATERING FOR ALL OCCASIONS

FAMILY ENTERTAINMENT

EVERY FRIDAY & SATURDAY NIGHT INTERNATIONAL & ARABIC SHOW



NAZO, VARTAN, AMIR & SINGER MUHAMMAD

CALL FOR RESERVATIONS
TEL 626-281-1006 626-587-1048
FAX 626-281-3641

910 E. MAIN ALHAMBRA, CA



BELLY DANCING

PHOTO/CONCEPT-J/D-2005 TEL (626) 795-4493

ՊՕՂՈՍ ԳՈՒԲԵԼԵԱՆԻ «ՓՏԱԽՏ»-Ը ԳԻՐՔԻՆ ԱՌԻԹՈՎ

Շարունակում էջ 13-էն

վատահ է, չէր կարող վատահ չլիներ, որ իր գրողական նկարագիրը գրքից գիրք ամբողջանալու է, կոփուելու է, թրծուելու է, այլապես գրիչը չէր թափախուի մեղանի մէջ... Թէեւ համատարած ինքնահոսի դարաշրջանում ենք ապրում: Այո, արձակագիրը իր բնորոշումների պէս «բաց-սիրտ» ու «բացսեղան» մարդ է: Ի հեճուկս մի շարք բացբերանների, Պօղոս Գուբելեան անհատը փակբերան է, նրանից հեշտ չես կորզի որեւէ գաղտնիք կամ էլ կարծիքի պէս բան: Նա ասի ի բերան կարող է մնալ, սակայն գարմանքից չանցնել անդին: Դա պարտիզանական յատկութիւն էր երկրորդ համաշխարհայինի տարիներին Սեփական հաւատամքի լրտեսը լինել, կը նշանակէ՝ տանուլ չտալ այն, ընդհակառակը, ոչ միայն իր իսկ լրտեսը լինել, այլեւ մոռնախնայ ու բնաբերը միաժամանակ:

... Փտախտը ունէր իր ներքին օրինաչափութիւնը, տրամաբանելու

ու գործելու գաղտնի օրակարգը... (էջ 191):

Հեղինակը տիրապետում նաեւ ճշմարտութեան մտրակը բանեցնելուն, որի շաչիւն-շառաչիւնը լսելի է նրա ստեղծագործութիւններում: Նա հաւատարիմ է իր դասաւանանքին՝ լինել սպիտակ թղթի բարեկամը մինչեւ վերջ ու վերջից յետոյ էլ չդաւաճանել թղթէ սպիտակութեանը՝ միշտ փառաբանելով անաղարտ ճերմակութիւնը, որ իւրաքանչիւր գրողի ստեղծագործական գրասեղանի առագաստն է: Լինել սեփական խղճի նաւավար-նաւազը, ասի հասցնել բարութիւնը, սէրը, յոյսը, հաւատը: Աւելին, մնալ այդպիսին, կտրուկ դարձ կատարելով առ հայրենին: Ափրիկաներից ներք գալ ու դառնալ ազգային արժէքների դրօշակակիրներին: Սա պիտի լինի վաղուայ իրագործելի ծրագիրը: Եւ Պօղոս Գուբելեանը բարդոյթով չի տառապում: Նա յստակ գիտակցում է իր գրչի դերն ու նշանակութիւնը: Եւ ես՝ իբրեւ գրչակից, գործընկեր պարտաւոր եմ խայտալ նրա ձեռքբերմամբ, մտահոգուել վրիպակով, հառաչել թուացնել ամէն մի սխալ:

Այս ամէնով հանդերձ՝ ի՞նչ է բերում Պօղոս Գուբելեանը, ինչպէ՞ս է բերում եւ ինչո՞ւ է բերում: Գրողական աշխատասիրութիւնը նպատակասլաց դարձնող հրատապ հարցադրումների այս եռաժանին է (հարկաւ) այն միակ պատասխանատուն, երբ մէջտեղում շնորհալի գրիչ կայ եւ արդիւնաւէտ տառապանք: Պօղոս Գուբելեանն էլ իր հերթին բերում է ճանապարհ, ճշմարտութիւն եւ կեանք: Սա հենց ինչն է: Բերում է ժամանակակից համարձակութեամբ, սեփական ոճաւորմամբ, անարգել եւ անհողողող: Սա էլ գոնէ նրա ինչպէսն է: Որ ազգը դիմագիծ ու դիրք վերականգնի, ապրի իր պայքարի հորձանուտում, միաւորի մեզ ու ինքն էլ մեզնով միաւորուի: Սա էլ հենց Պօղոս Գուբելեանի ինչուն է: Նրա գրական վաղը հուռթի է: Նախապէս առողջ: Մարտնչողականութեամբ՝ յստակ:

Վերոյիշեալ հարցադրումները կարող են յայտնուել նաեւ միջակութեան գրասեղանին, բայց դա չի նշանակում, թէ այդ քստմնելի միջակութիւն կոչուածը կը կարողանայ սայլը տեղաշարժել: Երբ ժամանակին երիտասարդ Լերմոնտովը բացականչեց՝ «մնաս բարեաւ, անլ-

ուս Ռուսաստան»: Հասարակութիւնը ծափահարեց, քանզի հասկացաւ, ու կուսեց նորեկ տաղանդի տաղանապը: Իսկ իշխող մթնոլորտը, գրաքննադատութիւնը եւ այլ աքցանէ բարքեր սուխններով ընդունեցին այդ ձեւակերպումը, թէ ո՞նց, ինչպէ՞ս է կարելի, ազգատեսցութիւն չէ՞ արդեօք Լերմոնտովի ասոյթը, հայհոյանք չէ միթէ նրա պոռթկումը... շինծու ցաւակիցներ ի յայտ եկան ու դատապարտեցին՝ խորապէս չընկալելով, չըմբռնելով, չնկատելով լաւատեսութեան հատիկը, որն անթաքոյց կար այդ ձեւակերպման տակ: Լերմոնտովի ասոյթը գրեթէ յեղափոխական կոչ էր, մտաւորականի տեղագին մարտահրաւէր՝ յանուն լուացուած ու մաքրամաքուր Ռուսաստան-հայրենիքի: Մեզանում էլ կան վառ օրինակներ, երբ կարող է սխալ մեկնոյթը ճակատագրական լինել: Պերճ Պոռչեանի «ցեցերից» մինչեւ Յակոբ Պարոնեանի «Ազգային Ջոջերն» ու Ն. Աղալեանի «Ապոկալիպսը» լերմոնտովեան ցաւի հանգոյն միտում է հայոց հարցը... Հիմա էլ Պօղոս Գուբելեանի «Փտախտն» է: Շուտընդ մի ապուհի ժամանակի դէմքին, աքացի՝ տարածութեան երեսին, դա ոչ այլ ինչ է, քան հայրենի կերպարի հեռացումը մօտեցում: Ո՞ր գրաքննադատութիւնից խուսափեց հեղինակը, յայտնի չէ: Ընդունենք, որ դա իրօք Ափրիկէի մասին է, բայց այսքան գուզահե՞ո... Այո, մարդակերտութիւն չէ՞ր արդեօք Հոկտեմբերի 27ը... վէպը վերլուծելուց այս կողմ կայ մի իրակա՞նութիւն, որ կոչոււմ է գրողի դիմանկար: Հեղինակն ինքն էլ լաւ գիտէ իր թաց ու չորը, ուստի մեզ համար կարեւորը նրա անհատականութեան պոտենցիալն է, այն ներուժը, որ դեռ տալու է առաւել արժանին, հենց այդ անելիքի մասին է իմ մտահոգութիւնը: Այս դիմանկարի թախտոտ շեշտադրութեան կշռոյթը... Սեփականութիւն է, ներմուծելի չէ, տապալելի չէ, յաղթահարելի է պահեստային լիցքաւորմամբ: Պօղոս Գուբելեան... երկուրեակ եղբայրներից տասնորդական վայրկեանով կրտսերը, ստեղծագործական առումով՝ առաւել յայտնին:

Պօղոս եղբայրը միայնակ է մտել գրական ասպարէզ, հրատարակում է վէպեր, որոնք չնայած իրենց յարուցած տարակարծութեան, ընդունելի են, խրախուսելի են, յիշարժան են: Հեղինակի ծանրաշունչ հեւքի մէջ կայ լուսաւոր մի թեթեւութիւն, որ դեռ ուրախացնելու է բոլորիս: Անխարդախ, ինչպէս արդն ու հացը, պիտի հարիւրութուն աստիճան շրջուենք դէպի գեղարուեստական իսուքը, փարատենք «ոգու սովը»: Շուրջ տաս գիրք է հրատարակել Պօղոս Գուբելեանը: Տարօրինակ միջավայրերից մինչեւ սովորականը բաբախում է գրողական մի անմիջականութիւն, որի հասցէն գուբելեանականութիւնն է: Ինքնասպանութիւնից մինչեւ մարդակերտութիւնը, համախառն դաշնութեամբ, հայ կուսակցութեան հետ, բրինձների սպիտակաթուր դրօշի ներքոյ...: «Փտախտը» փրկութիւն թելադրող վէպ է: Ինչպէս Ն. Աղալեանի «Ապոկալիպսը»: Ելք որոնելու մարմաջը չպէտք է դառնայ ախորոշման իրաւունք: Ընդհակառակը, գրողական կողմնապահութիւնը միշտ էլ ելք ու լուծում չի առաջարկում, այլ՝ մտածելու, խորհելու, մաքառելու, մարտնչելու, պայ-

ԳԻՄՐԻԻ ՈՍԿԵԱՅ ՏԱՂԱՆԴՆԵՐԸ

Շարունակում էջ 6-էն

ինծի: Ամէն անգամ լսելիս ետք այսպիսի տաղանդներ, կը մտածեմ, որ անսպառ է մեր ժողովուրդի ստեղծագործ ուժը:

Եւ այսպէս 2 ժամ ժողովուրդը հիացած երկար ծափահարեց, ծաղկեփունջերով ողողեց բեմը՝ չուզեցին սրահէն հեռանալ: Մեծ ծափողջուներ Նոր Սեբուսեղ Մշակութային Միութեան, որ անհաւատալի կարճ միջոցին քաջաբար յաջողու-

ցին այս հրաշալի համերգը: Մեծ պրաւօ, ազնիւ երաժշտասէր Անահիտ եւ Հերա Քաջբերունիներուն տարիներէ ի վեր լուռ ու մունջ կը հովանաւորեն 10էն աւելի այսպիսի տաղանդներ: Միայն ճը կրցած էին բերել եւ իրենց հիւրն էին: Դարձեալ մեծ գովասանքի արժանի է «Գէորգ Մոմճեան» հիմնադրամի նախագահ՝ Ռոմէն Կողմոյեանը, որ անվհատ կ'աջակցի «Նոր Անուններ»-ու յայտնաբերումին եւ յառաջընթացին:

ԹՈՐԳՈՍ ՓՕՍԹԱԾԵԱՆ Ի ՊԱՏՈՒԻ

Շարունակում էջ 7-էն

նան: Հանդիսավարը բեմ կը հրաւիրէր յոբելիարը, որ թէեւ յուզուած, սակայն յստակ հոգեվիճակով մը կարճ անդրադարձ մը ըրաւ իր կեանքի որոշ հանգրուաններուն, եւ անկեղծ շնորհաւորութիւններ յայտնեց ձեռնարկի պատրաստութեան եւ յայտագրի մասնակիցներուն հասցէին:

Ապա բեմ պիտի բարձրանար Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, իր գեղեցիկ խօսքը ըսելու համար, յատկապէս գնահատելով յոբելիարին ծառայութեան երկար կեանքը, եւ առաւել կեանք եւ ստեղծագործական աշխատանք մաղթելով:

Ապա իրեն պիտի ընկերանային եկեղեցական դասը ամբողջութեամբ, եւ «Ուրախ լեռ, Սուրբ

եկեղեցի» շարականի երգեցողութեամբ եւ ապա Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակի ընթերցումէն, ետք, Առաջնորդ Սրբազանը, Թորգոմ Փօսթաճեանի լամբակին պիտի կայնէր Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ շքանշանը:



Ձեռնարկի աւարտին, տեղի պիտի ունենար իրապէս ճոխ հիւրասիրութիւն որու ընթացքին ներկաները առիթ կ'ունենային շնորհաւորելու յոբելիարը:

Իսկապէս յիշատակելի եւ գեղեցիկ յոբելինական հանդիսութիւն մըն էր որ տեղի ունեցաւ: Մեր անկեղծ շնորհաւորութիւնները վաղեմի բարեկամ եւ գրական գործակից յոբելիար Թորգոմ Փօստաճեանին: Նոյնպէս զինք կը շնորհաւորենք մեր շրջանակի անունով: Թ. Ս.

բարելու է մղում նախ իրեն՝ հեղինակին, ապա եւ ընթերցողներին: Պօղոս Գուբելեանն էլ ունի իր ընթերցասրահը: Ազատագրուած տեղականը գերադասելի է ազատագրող փոխօգնութիւնից: Պետական մուրացկանութիւնից բարձր է ժողովրդի անհաց, անլոյս, անտաք, անհիմն անտեսութիւնը: Անօթի ազգը չի կարող ծնել կուշտ արքաներ: Սա գիտակցում է Պօղոս Գուբելեանը: Աչքաթող չի անում ոչինչ: Նահանջի մէջ էլ պահանջատիրութիւն է նշմարում, դա էլ հենց անհատականութեան վառ դրսեւորում է: Ախորոշումը պարզ է արդէն՝ փտախտ: Կնախարգելիչ բուժումը չպիտի ուշանայ: Եթէ հարկաւոր է, ապա ի կատար ածել վիրահատութիւնը, անգամ կեսար-

եան հատման շնորհիւ: Վաղուայ մարմինը պէտք է առողջ լինի եւ ունենայ հայեցի դիմագիծ: Փառք այս համոզմունքին, որի հատիկները թփրտում են նաեւ Պօղոս Գուբելեանի ստեղծագործութեան էջերում... Յուսով ենք՝ փնջուած տեսնել դրանք, որ զգանք միաբանութեան կուսակուած ներուժը, իսկ այդ ներուժով Արարատ լեռն էլ կարելի է շալակել ու տեղափոխել, բայց դէպի ո՞ւր... Ի հարկէ, դէպի գեղարուեստական գրականութիւնը: Փառք այդ ճանապարհին նաեւ: Կարելի է եւ շալակել: Ոչ թէ հիւր գնալ Արարատին պատմուածքում, կամ վրիպակում: Այլ հենց՝ տանտիրոջ կարգավիճակով այցելել լեռանը, թէկուզ եւ ուշացրած դիմանկարի սահմաններում:

«ՆՈՐ ՄԵՐՈՒՆՊ»
ՇՆՈՒՍԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑԸ
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
(ՎԼԵՆՏԵՅԼ, ՊԸՐՊԵՆԵ, ԼԱ ԸՐԵՄԵՆԹԱ)
ՅԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00


Jessica Demirdjian
Realtor®
 **Prudential**
California Realty
9878 Hibert Street
San Diego, CA. 92131
Bus 858 653-6400 Fax 858 653-6440
Cell 619 846-7738 jessicad@prusd.com

ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ 24ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԸ

Շարունակուած էջ 8-էն

ուր պիտի գտնէք արդիական պահանջները լրացնող գրադարան՝ յատկապէս հայ լեզուի բաժինով ճոխ, ընդարձակ դասարաններ, տարրալուծարան, խաղաղապարտ եւ այլն: Հիմնադիրները երազ մը ունէին, թէ եւ թերահաւատներ կային, սակայն յարատեւութեամբ ու հաւատքով այդ երազը իրականացաւ:

Երազ, հաւատք, բաց կը մնայ կարգալ Աստուած շունչէն Եսայի 6.8 «Եւ Տիրոջը ձայնը լսեցի որ կը հարցնէր որո՞ւ դրկեմ, ո՞վ պիտի երթայ մեզի համար»: Եւ ես ըսի «հոս եմ Տէր, զիս դրկէ»:

Տօթք. Աթիքեան կողմէն որ մեզմէ ամէն մէկը մատնացոյց ընէ ինքզինքը եւ պարտաւորութիւնը զգայ Մերտինեանի առաքելութեան մէջ բաժին վերցնելու: «Բարեկամներ, 25րդ տարեդարձի սեմին, այս ձեռնարկը թող ըլլայ սկիզբը հանգանակութեան արշալին, ի նպաստ մեր նոր երազին»:

Երկու շրջանաւարտներ, Օրդ. Նաթալի Մէնէշեան 1998ի շրջանաւարտ, հայերէն լեզուով եւ Օրդ. Գարին Սարտարեան՝ 1995ի շրջանաւարտ, անգլերէն լեզուով խօսք առին: Երկուքն ալ կ'ուսանին համալսարաններու մէջ, առաջինը՝ Քաղաքական Գիտութիւններ, երկրորդը՝ Բժշկութիւն:

Իրենց խօսքին մէջ, երկու շնորհալի հայուհիները վկայեցին Մերտինեանին առած իրենց բարձր ուսումին, հայեցի կրթութեան եւ հոգեւոր ու բարոյական դաստիարակութեան բարերար ազդեցութեան մասին:

Պրն. Յովսէփ Ինճէճիքեան, վարժարանիս տնօրէնը, հպարտանալու առիթ համարեց Հայ Աւետարանական համայնքի բերած նպաստը իր կազմաւորման օրերէն սկսեալ, հիմնելով գոյէճներ, Աստուածաբանական ձեւարաններ ու վարժարաններ Կիլիկիայէն, Միջին Արեւելք ու հիմա՝ Միացեալ Նահանգներ: «Այսօր, հայրենիքէն հազարաւոր մղոններ հեռու, խաղաղականի այս ամիսը զրոյց, ուր այլասերութիւնը այլքները ամէն օր կը կլանեն հայկազունեանց մեր նոր սերունդը, հայ դպրոցը կը մնայ մեր լաւագոյն երաշխիքը եւ ամենէն ապահով լատար հայապահպանութիւնը վեր ու սրբազան առաքելութեան»:

Ան եզրափակեց իր խօսքը «25ամեակի սեմին 2 մարտահրաշքներու առջեւ կը գտնուինք. ա) Ժամանակն է որ Մերտինեան վարժարանը օժտուի նորակառուց շէնքով եւ արդիական սարքերով. բ) Դպրոցը բարձրանայ մինչեւ երկրորդական վարժարանի: Վստահ եմ որ Աստուած մեր ազգին մէջէն նոր «Մերտինեաններ» պիտի հանէ մեր տեսիլքները իրականացնելու համար»:

Պրն. Քիրքեան հրաւիրեց Պրն. Կրէյ Մարթայեանը՝ նախկին Մերտինեանցի որ ներկայիս Էնսինոյ շրջանի (Council) ի անդամ է: Ան հոգաբարձութեան ատենապետին եւ տնօրէնին յանձնեց երեք զնահատագրեր:

Գեղարուեստական բաժնին մէջ ելոյթ ունեցան դպրոցին աշակերտական երգչախումբը, որ երգեց Կոմիտասէն հայ ժողովրդական երգերու փունջ մը եւ ներկաները հաճոյքով ունկնդրեցին Օրդ. Կարինէ Աւագեանի մեներգները, դաշնակի ընկերակցութեամբ Յարութ Մէնէշեանի մեկնումը:

Դպրոցի աշակերտական կեանքէն առնուած սահիկներու ցուցադրութիւն մը տեղի ունեցաւ, Տիկ. Ռիթա Հասրճեանի, (Co-Chair) յանձնարումը ատենապետուհիին բացատրութիւններով:

Վիճակահանութեան էսք, Վեր. Բան Թովմասեանի արթթքով ձեռնարկը աւարտեցաւ:

Այս հաստեղբայր ձեռնարկին գոյացաւ աւելի քան 50,000 տոլար: Իսկ Տիկնանց օժանդակ Մարմին կողմէ, Տիկ. Ժիլիէթ Ապտուլեան, բեմ ելլելով, 10,000 տոլարի չէք մը եւս յանձնեց հոգաբարձութեան: Շնորհակալութիւն բոլորին:

Յատուկ կերպով կ'ուզենք յիշել անունները ձեռնարկը յաջողցնող յանձնախումբին:

Տօթք. Հրայր Աթիքեան, Տօթք. Անի Տարազեան, Պրն. Յովսէփ Ինճէճիքեան, Տիկ. Անի Հանէսեան, Տիկ. Ռիթա Հասրճեան՝ ատենապետուհի (Co-Chair), Տիկ. Մարալ Մաթոսեան, Տիկ. Սիրվարդ Մուրատեան, Տիկ. Ռիթա Մէնէշեան՝ ատենապետուհի (Co-Chair), Տիկ. Սեդա Նալպանտեան, Տիկ. Ճիլտա Պետրոսեան, Տիկ. Հիլտա Սարգիս եւ Տիկ. Էլիզապէթ Թիլքեան:

Բոլորին վարձքը կատար:

ՅՈՎԱՒՓԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԴԻՄԱԿԱՇԱՆԴԵՍԸ

Շարունակուած էջ 8-էն

առաւ Հ.Բ.Լ.Մ. Հարաւային Գալիֆորնիոյ Շրջանային Վարչութեան անդամ Պրն. Ենովք Պալիքեանը, որ ներկաներուն փոխանցեց, թէ ինչպէս միշտ Հ.Բ.Լ.Մ.ը հաւատարմութեամբ պատրաստելու ու դաստիարակելու վսեմ առաքելութեան անհրաժեշտութեան, նախաձեռնած է Փաստախնային ներս Երկրորդական Վարժարանի բացման աշխատանքին, եւ հաւատարմացող որ յաջորդ տարեշրջանին՝ 2006-2007ին դպրոցը արդէն պիտի բանայ իր դռները եւ հրաւիրեց ներկայ ծնողները այցելելու դպրոցը, Open House-ի օրը, որ տեղի պիտի ունենայ Ապրիլ 8, 2006ին Փաստախնայի Հ.Բ.Լ.Մ.ի կեդրոնի շրջափակէն ներս գտնուող

կառուցին մէջ:

Երեկոն խանդավառեցին երգիչ Աբոն ու իր նուագախումբը, որոնք ներկաներուն հաճելի ժամանց պարգեւեցին:

Վարձքը կատար բոլոր անոնց որոնք սատարեցին սոյն դիմակահանդէսին յաջողութեան, որ բաւական հաստեղբայր ձեռնարկ մը եղաւ, նամանաւանդ Մնողա-ուսուցչական մարմինին, որու ատենապետուհին՝ Տիկնան Այտա Սէթեանին մղիչ ու կազմակերպիչ շունչով ու նուիրումով, այս տարեշրջանի աշխատանքները նորանոր յաջողութիւններով կը պսակուին: Յարատեւ յաջողութիւններ կը մաղթենք մեր սիրելի վարժարանին:

Թղթակցութիւնը Վարժարանէն

ՄԱՇՏՈՑ ԳՈՒԷՃ ԵՐԵՔ ՆՈՐ ԴԱՍԸՆԹԱՅԵՆԵՐԸ

Շարունակուած էջ 8-էն

ստեղծած են մեր համայնքին մէջ եւ փորձառական շրջանէ մը ետք գոյէճը ներառած է սոյն մասնագիտութիւնը իր կրթական ծրագրին մէջ: Մեր փոխարարներու թիւններու զարգացման եւ անոնց մակարդակի բարելաւման մէջ՝ սոյն դասընթացքին հետեւող ուսանողներ մեծապէս պիտի օգտուին Դոկտ. Մելքոնեանի լայն հմտութեանն ու փորձառութեանն:

Գ. Հիպոստատու ժողովեան արուեստն ու գիտութիւնը: Այս նոր դասընթացքը փորձառական շրջան մը պիտի սկսի Ապրիլ 7-էն սկսեալ առաջնորդութեամբ փորձառու եւ հմուտ բժիշկ՝ Տօթք. Յարութիւն Սաղրեանի:

Արձանագրութեան եւ չաւելեալ տեղեկութիւններու համար հետաքրքրուողներ կրնան դիմել Մաշտոց Գոյէճ՝ (818) 548-9345 թիւով: Գոյէճի նոր դպրոցավայրի հասցէն է 411 E. Acacia, Glendale, CA 91205

ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

Հանգուցեալ Տիկն ՍԻԼՎԱ ՊՁՏԻԿԵԱՆԻ կանխահաս մահուան տխուր առիթով, Կիլիկեան Կրթական Միութեան Կեդրոնական Վարչութիւնը կու գայ իր խորագրաց ցաւակցութիւնները յայտնելու ամուսնոյն՝ գաղութիս երեւելի անձնաւորութիւններէն բարերար Տիար Գրիգոր Պրիկեանին, զաւակներուն եւ համայն հարազատներուն ու յատկապէս Միութեան Պատուոյ անդամ եւ բարերար Տէր եւ Տիկ. Գէորգ Գարաճրճեաններուն եւ առ այդ փոխան ծաղկեպսակի \$100 տոլար կը նուիրէ «Մասիս» շաբաթաթերթին:

Արդարեւ հանգուցեալ Տիկն ՍԻԼՎԱ ՊՁՏԻԿԵԱՆ մեծ ներդրում ունեցած է մեր գաղութային կեանքէն ներս, ի մասնաւորի արուեստի մարզին մէջ: Ան եղած է գործունեայ հասարակական գործիչ մը եւ մեծ հայրենասէր մը:

Հանգիստ անոր հոգնաբեկ աճիւններուն:

ԿԻԼԻԿԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

Տիկն ԳՈՂՅԱՐ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով Տէր եւ Տիկ. Եփրեմ եւ Վարսենիկ Պաղպուտարեան իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի բոլոր հարազատներուն եւ առ այդ \$100 տոլար կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:

Տիկն ԳՈՂՅԱՐ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով այրին Տիկն Մայրենի Կարապետեան եւ այրի Տիկն Մարից Զաղապանեան իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի բոլոր հարազատներուն եւ առ այդ \$100 տոլար կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:

Տիկն ԳՈՂՅԱՐ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով Տէր եւ Տիկ. Նազարէթ եւ Նորա Պապիկեան իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի բոլոր հարազատներուն եւ առ այդ \$20 տոլար կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ ապա առաքեցէք հետեւեալ հասցեով
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

[Http://www.massisweekly.com](http://www.massisweekly.com)

ԱՐԵՒԸ ԼԵՈՒԱՆ ԵՏԻՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
Սաեակ Թուֆեանի
«ԱՐԵՒԸ ԼԵՈՒԱՆ ԵՏԻՆ»
Հայրենական
Օրագիրը

Ստանալու համար
դիմել հեղինակին՝
Հեռ. (818) 563-6174

կամ հետեւեալ
գրախանութիւնները
Կլէմտէյի մէջ
Ապրիլ՝ (818) 213-4112
Պերմի՝ (818) 244-3830
Սարգսապատ՝
(818) 500-0790

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION



Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:
Proud Past, Exciting Future.



ՇԲԸՄ-Ի 100 ԱՄԵԱԿԻ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

ՅՈՒՇԱՐՁԱՆ

ԱՊՐԻԼ 23

Կիրակի, 23 Ապրիլ 2006-ին, Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Յովնան Արք. Տերտրեան պիտի պատարագէ եւ հոգեհանգստեան մասնաւոր պաշտօն պիտի կատարէ Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ մէջ: Նման հոգեհանգստեան արարողութիւններ պիտի կատարուին տարբեր յարանուանութիւններու պատկանող Հայկական Եկեղեցիներու մէջ:

ԸՈԳԵՐԱՆԳԻՍ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՁ, ՈՐՈՒՆ ՊԻՏԻ ՅԱՋՈՐԴԷ

ԽԱՉՔԱՐ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ՕԾՈՒՄ ԵՒ ԱՂՕԹՔ

Կէսօրէ ետք ժամը 1:30-ին, Փասատինայի Հ.Բ.Ը. Միութեան Կեդրոնին մէջ Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Յովնան Արք. Տերտրեան, բացումը պիտի կատարէ եւ օժէ հաշքար մը նուիրուած ՀԲԸՄ-ի նուիրեալ եւ հաւատաւոր անդամներու յիշատակին: Իրեն պիտի միանան Հայ Կաթողիկէ եւ Աւետարանական համայնքներու հոգեւոր պետերը:

ՏՈՒՍԱՍՏԻՈՒԹԻՒՆ

ՄԱՅԻՍ 7

Կազմակերպութեամբ՝ Հ.Բ.Ը. Միութեան Հարաւային Գալիֆորնիոյ Շրջանակային Յանձնաժողովին եւ հովանաւորութեամբ՝ Արեւմտեան Թեմի Առաջնորդ Յովնան Արք. Տերտրեանի, Հ.Բ.Ը. Միութեան 100 ամեակը նշող բացառիկ հանդիսութիւն մը տեղի պիտի ունենայ Մայիս 7, 2006-ին, ժամը 5:00-ին Փասատինայի Ալեք Մանուկեան Կեդրոնին մէջ:

ԳԼԽԱԴՈՐ ԲԱՆԱԽՕՍՆԵՐ՝ ԿԱՌԱՎԱՐԻՉ՝ ՃՈՐՃ ՏԵՕՔՍԷՃԵԱՆ, ԱՍԱՏՈՒՐ ԿԻՉԵԼԵԱՆ

ԱՐՈՒԵՍԱԳԵՏՆԵՐ՝ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏԵԼԵԱՆ, ԼՈՐՆԱ ԿՐԻՑԻԹ

ՄԱՍԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ ԿԼԵՆՏԵՅԼԻ ՇԱՄԱՉՊԱՅԻՆԻ ԳՈՒՄԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ, ՇԲԸՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ-ՏԵՄԻՐՃԵԱՆ ԿԱՐԺԱՐԱՆԻ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ, ՈՒՒԲԵՆ ԹԵԼՈՒՆՅ, ԱՆԱՇԻՏ ՆԵՐՍԵՍԵԱՆ

Միտք հրաւիրուած էք բոլորը: Հիւրասիրութիւն հանդիսութենէն ետք: Պատասխանեցէք մինչեւ Ապրիլ 15, 2006, հեռաձայնելով ՀԲԸՄ-ի գրասենեակը՝ (626) 794-7942 կամ գրել՝ info@agbuca.org

ԿԱՆԱ-ՃԱՇԿԵՐՈՅԹ

ՅՈՒՆԻՍ 17

Հ.Բ.Ը. Միութեան Հարաւային Գալիֆորնիոյ Շրջանակային Յանձնաժողովը կը յայտարարէ հարիրամենակի Կալա-Ճաշկերոյթ, տօնելու համար Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան պանծալի տարեդարձը:

ՇԲԸՄ ԸԱՐԻԻՐԱՄԵԱԿԻ ԿԱԼԱ-ՃԱՇԿԵՐՈՅԹ

ՆԱԽԱԳԱՅՈՒԹԵԱՄԲ՝ ՈՒՉԸՐՏ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

Universal Hilton Hotel Պանոպոլիս մէջ: Յաւելեալ տեղեկութեանց համար հեռաձայնել ՀԲԸՄ-ի գրասենեակը՝ (626) 794-7942, ext. 11 կամ գրել՝ annette@agbuca.org